

9-10(332-333)
04.04.2013
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականին եւ գիտարար, իմանալ զբանս հանձարոյ

ԼՍԱՐԱՐ

Լусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԽՈՇՈՐ ՔԱՅԼ՝ ԱՐՑԱԽՈՒՄ ՏՅՏ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՒՂՈՒԹՅԱՄ

Մարտի 29-ին Արցախի պետական համալսարանի խորհրդակցությունների նորաստեղծ դահլիճում տեղի ունեցավ մի միջոցառում, որը մասնակիցների գնահատմամբ՝ պատմական իրադարձություն է և ուրույն, բացառիկ ծրագրի նոր էջ բուխական կրթության մեջ, քանզի համաշխարհային ամենաբարձր նշանող ունեցող կրթական համակարգ է ներմուծվում Արցախի կրթական ոլորտ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կապի միջոցների միկրոտեկտրոնային սխեմաների և համակարգերի ուսուցման խթանման նպատակով միջազգային ճանաչված «Սինոփսիս Արմենիա» և «Ղարաբաղ Տեխնո» ընկերությունները հայտարարել են Արցախի պետական համալսարանի հետ համագործակցություն սկսելու ծրագրի մասին և հավաքվել պաշտոնապես վավերացնելու եռակողմ համաձայնագիրը:

Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, կառավարության անդամներ, համաձայնագրի կողմերի և ՏՏ ոլորտի ներկայացուցիչներ, լրագրողներ: Այն վարում էր ԼՂՀ կրթության և գիտության նախարար Սլավա Ասրյանը:

Ողջունելով ձեռնարկունը՝ Ս. Ասրյանն ասաց, որ սկիզբ է դրվում մի նախաձեռնության, որը բխում է ԼՂՀ նախագահի նախընտրական ծրագրի դրույթներից, որով տնտեսության զարգացման համար գերակայություն է տրվում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համար խթանների ստեղծմանը: Համաձայնագիրը կնպաստի այդ գործընթացի իրականացմանը: Նախարարի խոսքով՝ ՏՏ-ի մուտքն Արցախի վերջին տարիներին զգալի է և սկսվել է կրթական ոլորտից: Հանրակրթական բոլոր հաստատություններում ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաներ առարկան ուսուցման ստիճակում համապատասխան մասնագիտությունների առկայությունը և նոր մուտք գործող՝ կապի միջոցների միկրոտեկտրոնային սխեմաներ և համակարգեր մասնագիտությունն այդ շարքում խթան կհանդիսանան մեր տնտեսության զարգացմանը: Նա շնորհակալություն հայտնեց «Ղարաբաղ Տեխնո» ՓԲԸ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանին, որի ներդրումը տնտեսության բոլոր ճյուղերում և հատկապես կրթության ոլորտում մեծ է, ով հանձն է առել նաև միջոցներ (շուրջ 28 մլն դրամ) հատկացնել համապատասխան ամբիոնի գործարկման, կահավորման և դասախոսների վարձատրության համար:

Նախարարը ողջունեց համաշխարհային ճանաչում ունեցող «Սինոփսիս» ընկերության մուտքը Արցախ՝ ի դեմս հայաստանյան նրա ընկերության գործադիր տնօրեն Յովիկ Մուսայեյանի, ում շնորհիվ Արցախի մայր բուհը կլինի հինգերորդը ՀՀ չորս բուհերի շարքում, որոնց հետ համագործակցում է ընկերությունը: Դեռ «Սինոփսիս Արմենիա» ընկերությանն է վերապահված Արցա-



խում մասնագետների պատրաստման գործընթացը:

Անկասկած, համաձայնագրի ընդունումը մեծ պարտավորություն է դնում ԱրՊՀ-ի վրա, որը պետք է կարողանա խթանել բարձր տեխնոլոգիաների մասնագետների պատրաստման գործընթացը, նշեց Ս. Ասրյանը, որի տեղեկացմամբ՝ ներկա պահին ԱրՊՀ երեք մասնագետներ վերապատրաստվում են «Սինոփսիս Արմենիայի» համապատասխան ամբիոնի կողմից և սեպտեմբերի 1-ից նաև տեղի դասախոսական ուժերի հետ միասին կարող են լիարժեք բակալավրական կրթություն իրականացնել:

Նախարարը մեկ անգամ ևս ընդգծեց համաձայնագրի նշանակությունը: Այն սկիզբը կարելի է համարել պետական մի գործընթացի, որի նպատակը Արցախի ՏՏ ոլորտում ետ չնմալն է՝ առաջին հերթին Հայաստանից, այնուհետև՝ զարգացած մյուս երկրներից:

Ս. Ասրյանը շնորհակալություն հայտնեց ԼՂՀ իշխանություններին և ամձամբ՝ Նախագահին, ում անմիջական ղեկավարությամբ ստեղծվում են բոլոր այն կապերը, որոնք գործում են Հայաստանում և փուլ առ փուլ ծավալվում են նաև Արցախում: Իր հերթին, որպես կրթության ոլորտի պատասխանատու, նախարարը պատրաստակամություն հայտնեց գործադրել բոլոր ջանքերը՝ համաձայնագիրը իրողություն դարձնելու համար:

Համաձայնագիրը ստորագրեցին «Սինոփսիս Արմենիայի» կողմից՝ ընկերության գործադիր տնօրեն Յովիկ Մուսայեյանը, «Ղարաբաղ Տեխնո»-ի կողմից՝ գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, Արցախի պետական համալսարանի կողմից՝ ռեկտոր Ստեփան Դադայանը:



րային ապահովմամբ հագեցած ենթակառուցվածք: Կիրականացվի ամենօրյա կրթական գործունեություն և համապատասխան ֆակուլտետի բակալավրատի երկրորդ կուրսն ավարտած ուսանողներից ուսանողական համակարգի ընտրություն: Բնականաբար, կընտրվեն ֆիզիկայից և մաթեմատիկայից խոր գիտելիք ունեցող ուսանողները: Լավագույնները հնարավորություն կունենան ուսումնառությունը շարունակել մագիստրատուրայում:

«Սինոփսիսը»՝ որպես համաշխարհային առաջատար ընկերություն, համագործակցում է աշխարհի ավելի քան 1300 համալսարանների հետ: Հայաստանում դրանք չորսն են՝ ՀՊՃԵ, ԵՊՀ, ՀՊՀ և Եվրոպական տարածաշրջանային ակադեմիան: «Արցախի համալսարանի հետ համագործակցությունը միկրոտեկտրոնիկայի բնագավառում բարձրորակ կարգերի պատրաստման մի յուրօրինակ նախաձեռնություն է, որը բացառիկ նշանակություն կունենա հանրապետությունում նորարարական միջավայրի ձևավորման առումով, - ասաց «Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ տնօրեն Յովիկ Մուսայեյանը: Արցախի համար չկա այլ ճանապարհ, քան ապավինել ինտելեկտին, գիտատար տնտեսությանը, որովհետև սա այն ճյուղն է, որը, անկախ նրանից, թե երկիրն ինչ աշխարհաքաղաքական իրողությունների մեջ է, անկախ նրանից, որ երկիրը ժամանակավոր շրջափակման մեջ է, թե ինչ դժվարություններ ու մարտահարվերներ կան, տեղեկատվական, հեռահաղորդակցային տեխնոլոգիաները կարող են զարգանալ, եթե դրա համար լինեն բավարար ինտելեկտուալ պոտենցիալ, քաղաքական կամ իշխանությունների կողմից, որովհետև հնարավոր չէ զարգացնել մի ճյուղ, ոլորտ, որը չունի պետական հոգածություն և հովանա-

վորչություն»: Այս առումով Հ. Մուսայեյանը իր խորին շնորհակալությունը հայտնեց ԼՂՀ նախագահին, կառավարությանը, կրթական համակարգի և «Ղարաբաղ Տեխնո»-ի ղեկավարներին, որոնք աջակցեցին այս ծրագիրը կյանքի կոչելու: Հ. Մուսայեյանի խոսքով՝ «Սինոփսիս» տեսանկյունից Հայաստանը դիտարկվում է որպես տարածաշրջանային կրթական կենտրոն, որտեղ վերապատրաստվում է նշված համալսարանների դասախոսական ենթակազմը, և մշակվում կրթական ծրագրեր, որոնցով իրականացվում են լրջագույն ուսումնական գործընթացներ: Նա մատնանշեց արաբական մի շարք երկրների համալսարանները, որտեղ միկրոտեկտրոնիկա են դասավանդում և օգտագործում «Սինոփսիս Արմենիայի» մշակած կրթական ծրագրերը պրոֆեսոր Վազգեն Մելիքյանի գլխավորությամբ: Հ. Մուսայեյանը հավաստիացրեց, որ ուսանողները կլինեն շատ որակյալ կադրեր և կհամալրեն Արցախում ՏՅՏ ոլորտի ընկերությունները, որոնք գործում են Արցախում: Եվ հատուկ ընդգծեց «Գործում են Արցախում» միտքը, որպեսզի թյուր պատկերացում չլինի, որ այստեղ մասնագետներ են պատրաստում, որոնք հետագայում կարտահանվեն: Դա շատ պզուրկեցային է իրենց համար. պետք է պատրաստվեն կադրեր, որոնք կնպաստեն Արցախի տնտեսության զարգացմանը: Նա շնորհավորեց պատմական այդ օրվա համար՝ ասելով, որ գուցե շատերը չեն գիտակցում դրա իմաստը, բայց ինքը լիահույս է, որ մոտ ապագայում Արցախը լուրջ հաջողություններ կարձակագրի տեղեկատվական հեռահաղորդակցային ոլորտում:

Հավելյալ տեղեկացնեց, որ «Սինոփսիս» ընկերությունն արագացնում է նորարարությունները համաշխարհային էլեկտրոնային շուկայում: Որպես էլեկտրոնային նախագծման ավտոմատացման (ԷՆԱ) և կիսահաղորդչային մտավոր սեփականության (ՄՍ) առաջատար ընկերության ծրագրային ապահովումը, մտավոր սեփականությունն ու ծառայություններն օգնում են ճարտարագետներին հարթահարել նախագծման, ստուգման և արտադրության ոլորտում առկա մարտահրավերները: 1986-ից ամբողջ աշխարհի ճարտարագետներն օգտագործում են «Սինոփսիս» տեխնոլոգիաները՝ միլիարդավոր ինտեգրալ սխեմաների և համակարգերի նախագծման և ստեղծման համար: «Սինոփսիսը» իր գործունեությունը Հայաստանում սկսել է 2004-ին:

Արտադրություն-բուհ կրթական մոդելը այսպիսին է. բակալավրիատի ծրագրի առաջին տարիների ընթացքում ուսանողները ստանում են հիմնական կրթություն մաթեմատիկայից, ֆիզիկայից և այլ գիտական առարկաներից իրենց ընտրած բուհում: Այնուհետև «Սինոփսիս» տեխնոլոգիաները ընտրում են լավագույն ուսանողներին: Դասընթացները տեղի են ունենում «Սինոփսիս» հատուկ

սարքավորումներով համարված լսարաններում, որտեղ ուսանողները կարող են օգտվել արտադրության մեջ կիրառվող գերժամանակակից ԷՆԱ ծրագրային ապահովման փաթեթներից:

«Ղարաբաղ Տեխնո» ՓԲԸ տնօրեն Ռալֆ Յիրիկյանը շնորհավորանքի իր խոսքում հավաստիացրեց, որ միայն այս ծրագրով չպիտի բավարարվել, պետք է մտածել կրթության բնագավառում այլ ծրագրերի իրականացման մասին, որոնք կնպաստեն ոլորտի զարգացմանը: Որպես ոլորտի պատասխանատու՝ նա պատրաստակամություն հայտնեց կանգնել իշխանությունների կողքին, աջակցել բազմաառարկա խնդիրների լուծմանը: «Միշտ այդպես ձեռք ձեռքի, կարող ենք ոլորտներ զարգացնել Արցախում», - ասաց նա:

ԱրՊՀ ռեկտորը, շնորհակալություն հայտնեց համաձայնագրի երկու կողմերին համալսարանում գիտելիքների կուտակմանը նպաստելու ու նաև այն բանի համար, որ ՀՀ ճանաչված բուհերի շարքում ԱրՊՀ-ն դարձել է հինգերորդը, որը համագործակցում է «Սինոփսիս»-ի հետ: Նա նշեց, որ այս պահի դրությամբ հստակեցվում է ուսանողների 15 հոգուց բաղկացած ցուցակը (ընդհանուր և կիրառական մաթեմատիկայի, ֆիզիկայի բաժինների լավագույն ուսանողներ) և հավաստիացրեց, որ համալսարանը պատվով կկատարի իր վրա դրած պարտականությունները:

Նշանակալից իրադարձության առթիվ համաձայնագրի կողմերին շնորհավորեց ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը: Երկրի ղեկավարը կարևորեց տեղեկատվական տեխնոլոգիաների դերը հանրապետության բոլոր բնագավառներում: «Մենք թևակոխել ենք մի շրջան, երբ հնարավոր չէ ապահովել երկրի ինքնաբավ և երկարաժամկետ զարգացումը առանց ՏՅՏ ոլորտի», - ասաց Բակո Սահակյանը: ԼՂՀ նախագահը շնորհակալություն հայտնեց «Սինոփսիս Արմենիա» և «Ղարաբաղ Տեխնո» ընկերությունների ղեկավարներին՝ կարճ ժամկետում Արցախի իշխանությունների խնդրանքին արձագանքելու համար՝ նշելով, որ համաձայնագիրը հիմք կհանդիսանա երկրի հասարակական կյանքի ճիշտ կառուցման և համաշխարհային տնտեսության արագ ինտեգրվելու համար:

Այնուհետև համաձայնագրի կողմերը պատասխանեցին դասախոսների և լրագրողների հարցերին:

Եզրափակելով՝ կրթության և գիտության նախարար Ս. Ասրյանը բարե եթե մարտեց համաձայնագրին ասելով որ առաջին միջոցառումն է անցկացվում նորաստեղծ դահլիճում, որի կահավորումն իրականացվել է մեր համերկրացի ակադեմիկոս Աբել Աղանբեկյանի միջոցներով և այդ կապակցությամբ շնորհակալության խոսքեր ուղղեց նրան: Համաձայնագիրը թող լավ սկիզբ դառնա նման միջոցառումների անցկացման համար:

Ս. ԽԱԶԱՐՅԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏԻՎԸ ԲԱՐՁՐ ՊԱՀՈՂ ԶԱՎԱԿԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԸ ԵՐԲԵՔ ԶԻ ՄՈՌԱՆՈՒՄ



Արցախը իրական հերոսների երկիր է. այդպես եղել է դարեր առաջ, այդպես է նաև հիմա: Պատմության տարբեր շրջափուլերում, երբ հայրենիքի վրա մութ ամպեր են կախվել, ծնվել են նոր ոյուցագույններ, որոնց սխրանքները իսկական լեգենդ են դարձել: Այդ լեգենդներից մեկն էլ ԽՍՀՄ կրկնակի հերոս, բազմաթիվ շքանշանների ու մեդալների ասպետ Նելսոն Ստեփանյանն է:

Ն. Ստեփանյանը ծնվել է հինավուրց բերդաբաղաք Շուշիում՝ 1913 թվականի մարտի 28-ին: Գուցե թե նրա կյանքն այլ ուղիով ընթանար, եթե ճակատագրի կամոք նրանց ընտանիքը չտեղափոխվեր Երևան: Արդեն իսկ դպրոցում սովորելու ժամանակ Նելսոնը երազում էր օդային դառնալ: Ամեն անգամ բռնող օդանավ տեսնելիս մտովի ուղեկցում էր սավառակները: Իրեն պատկերացնելով նրա դեպքին նստած: Դեռ այդ սերը նրան տարավ Երևանի ավիամոդելիստների ակումբ, որի ամենակազմակերպիչներից մեկը դարձավ: Յոթամյակն ավարտելով՝ Նելսոնը ընդունվեց Բաքվի Օրջոնիկիձեի անվան Անդրկովկասյան ռազմաօդային-պատրաստական հետևակային ուսումնարան, սակայն օդաչու դառնալու երազանքը նրան հանգիստ չէր տալիս:

Ի վերջո Նելսոնին հաջողվում է ընդունվել Բատայսկի քաղաքացիական օդային նավատորմի օդաչուների դպրոց, որն ավարտելուց հետո մնում է աշխատելու այդտեղ՝ որպես հրահանգիչ օդաչու: Այնուհետև օդաչուական բարձրագույն դասընթացներ է անցնում Միներալնիե Վոդիում, իսկ երբ սկսվում է Գայրենական մեծ պատերազմը, կրտսեր լեյտենանտ Նելսոն Ստեփանյանը կամավոր մեկնում է ճակատ:

46-րդ գրոհային ավիատեղակայանի կազմում յուրացնելով ԻԼ-2 գրոհային ինքնաթիռը, նա մասնակցում է Նիկոլակի և Օդեսայի պաշտպանական մարտերին: Դեռևս մեծ փորձ չունենալով օդային մարտերում գրոհներից մեկի ժամանակ նա վիրավորվում է, սակայն կարողանում է վնասված ինքնաթիռը հասցնել օդանավակայան՝ արժանանալով խրախուսանքի: Այնուհետև Ն. Ստեփանյանը տեղափոխվում է Բալթիական նավատորմի ՌՕՈՒՄ 57-րդ գրոհային ավիագումակ՝ մասնակցելով Լենինգրադի պաշտպանությանը:

Ուշագրավ է հատկապես 1941թ. հոկտեմբերի 4-ի մարտը, երբ սառնադարձի անցնելով թշնամու զենիթային իրանոթների հուժկու կրակի միջով, նրա ղեկավարած ստորաբաժանումը ճեղքում է կատարում դեպի թշնամու օդանավակայան և ոչնչացնում գերմանական բազմաթիվ ռմբակոծիչներ, զենիթային կրակակետեր: Ըստ ռազմավիճակագրական տվյալների՝ միայն Լենինգրադի մատուցներում Նելսոն Ստեփանյանի մարտական օդակը կարողացել է մինչև 1941 թվականի վերջը կատարել 38 մարտական թռիչք, ոչնչացնել ու շարքից հանել թշնամական ութ տանկ, 88 ավտոմեքենա, մեկ երկաթուղային փոխադրագնաց՝ կենդանի ուժով ու մարտական հանդերձանքով, 32 զենիթային հրանոթ, 33 գնդացի, ուրիշ այլ տեխնի-

կա: Այս սխրանքների համար նա արժանանում է Կարմիր դրոշի շքանշանի: Նելսոն Ստեփանյանին մարտական ընկերներն անվանում էին Բալթիկայի մրրկահավ: Այդ անվանումը պատահական չէր, քանզի նույնիսկ վատ եղանակային պայմաններում, երբ տեսանելիությունը շատ ցածր էր, նա դարձյալ գնում էր մարտական առաջադրանքի: Փոթորկահույզ պիլոտների գլխավորումը սկսվելով՝ Նելսոնը հակառակորդի նավեր էր հայտնաբերում ու ջրասույզ անում:

1942 թվականի մայիսին Ն. Ստեփանյանի մասնակցությամբ գրոհայինների խումբը Ֆիննական ծոցում խորտակում է ութ փոխադրանավ, իսկ հունիսին նույն այդ խումբը խորտակում է 15 այլ նավեր և սպառազինությամբ ու կենդանի ուժով բեռնավորված ինքնագնաց լաստանավ: Գոյություն ունեցող շրջանում Ստեփանյանի գլխավորած ԻԼ-2-ի վեցյակին հաջողվում է երկու օրվա ընթացքում ջրասույզ անել 11 նավ և ինքնագնաց լաստանավ:

Նրա անունը ահ ու սարսափ էր առաջացնում գերմանացի օդաչուների մոտ: Ընդունված փաստ է, որ ծովային նպատակակետին 20-30 մետր բարձրությունից սրընթաց գրոհային հարվածներ հասցնելու մարտավարության հեղինակը հենց Նելսոն Ստեփանյանն է, և դա իրամասնատարությունը միշտ հատուկ շեշտում էր: Մարտերում ցուցաբերած անօրինակ խիզախության համար Ն. Ստեփանյանը պարգևատրվում է Լենինի և արդեն երկրորդ անգամ՝ Կարմիր դրոշի շքանշաններով: Իսկ 1942 թվականի հոկտեմբերի 23-ին խիզախ հայրողուն շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

1944թ. ապրիլին Նելսոն Ստեփանյանը նշանակվում է Սևծովյան նավատորմի 47-րդ գրոհային ավիացիայի իրամասնատար: Մասնակցելով Դրիմի ազատագրման մարտերին՝ Ստեփանյանի գունդը ոչնչացնում է հակառակորդի 8 փոխադրանավ, 12 արագընթաց իջազորային լաստանավ, 9 պահակային նավակ, ավելի քան 3000 զինվոր ու սպա: Նրա 12 ԻԼ-երից բաղկացած խումբը Սուրաբի շրջանում ջրասույզ է անում միանգամից 3 արագընթաց դեսանտային լաստանավ, իսկ մայիսի 22-ին մասնակցելով շրջափակված Սևաստոպոլից դեպի Ռուսինիա ճեղքում կատարած պահակաձևավանքի ջախջախմանը՝ Նելսոնը անձամբ խորտակում է գերմանական փոխադրանավը: Այստեղ երրորդ անգամ Ն. Ստեփանյանը արժանանում է Կարմիր դրոշի շքանշանի:

Նույն տարվա մայիսին Նելսոն Ստեփանյանի ղեկավարած գունդը փոխադրվում է Բալթիկա, մասնակցում Մերձբալթիկայի ազատագրության համար մղվող մարտերին: 1944թ. օգոստոսին անվեհեր օդաչուն ներկայացվում է «Ոսկե աստղ» երկրորդ մեդալով պարգևատրության, սակայն մեդալը շնորհվում է... հերոսի մահից հետո:

1944թ. դեկտեմբերի 14-ին Նելսոն Ստեփանյանը կատարում է իր վերջին մարտական թռիչքը: Թշնամու զենիթային արկը խոցում է Բալթիկայի բազեի օդանավի բաքը, և նա վառվող ինքնաթիռն ուղղում է կուտակված թշնամական նավերի վրա: Նելսոնի համար գերեզման է դառնում Բալթիկ ծովը:

Զայ մեծամասն ծովակալ Գ. Իսակովը Նելսոն Ստեփանյանի մասին գրել է. «Այդ սքանչելի մարդու, քաջերից քաջի մասին կարելի է և պետք է շատ գրքեր գրել, այնքան շատ բան է կապված նրա փառապանք անվան հետ»:

Իսկ Կարմիրդրոշ Բալթիկական նավատորմի իրամասնատար, ծովակալ Վ. Տրուբուցն իր հուշերում գրել է. «Նելսոն Ստեփանյանը Սևաստոպոլի և Լենինգրադի պաշտպանության վետերանն է: Ամբողջ նավատորմը կակիծ է ապրում Նելսոնի՝ գրոհայինների գնդի խիզախ իրամասնատարի, երիտասարդության գերագնաց դաստիարակի մահվան համար: Նրա անունը հայտնի է Բալթիկական նավատորմի սահմաններից շատ հեռու»:

Երկրորդ «Ոսկե աստղով» Նելսոն

Ստեփանյանին պարգևատրելու մասին իրամասնագիրը հրապարակվեց 1945 թվականի մարտի 6-ին. նրա անունը ոսկե տառերով գրվեց այն 65 ավիատորների շարքում, ովքեր կրկնակի արժանացել են Խորհրդային Միության հերոսի կոչման:

Նելսոն Ստեփանյանի կիսանդրին տեղադրված է Շուշիում, Ստեփանակերտում, Երևանում: Գերոսի անունն են կրում արցախյան և հայաստանյան մի շարք բնակավայրերի փողոցներ, զբոսայգիներ ու դպրոցներ: Նրա անունն է կրում նաև Լենինգրադի (ներկայում՝ Սանկտ Պետերբուրգ) փողոցներից մեկը:

...Օրերս լրացավ Նելսոն Ստեփանյանի ծննդյան 100-ամյակը, ինչի կապակցությամբ հանրապետությունում կազմակերպվել են իշխատակի միջոցառումներ: Մասնավորապես, հորեյանի առթիվ Շուշիում և Ստեփանակերտում բարեկարգվել են նրա անունը կրող պուրակները: Մարտունու Ն. Ստեփանյանի անվան դպրոցում կազմակերպված «Գերոս օդաչուն» թեմայով ստեղծագործական շարժարարությունների մրցույթը, որի հաղորդները խրախուսվել են ԼՂՀ պաշտպանության ու կրթության և գիտության նախարարությունների կողմից:

Մարտի 28-ին հորեյանի կապակցությամբ ԼՂՀ կառավարական պատվիրակությունը հանրապետության նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ հարգանքի տուրք մատուցեց քաջ հայորդու իշխատակին: Պետական այրերի կողմից ծաղկեպսակներ դրվեցին Ստեփանակերտի Նելսոն Ստեփանյանի անվան պուրակում տեղադրված՝ հերոսի կիսանդրու պատվանդանին: Արարողությանը մասնակցում էին խորհրդարանի ու կառավարության անդամներ, ՊՆ բարձրաստիճան սպաներ, Գայրենական մեծ պատերազմի և Արցախյան գոյամարտի վետերաններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Այնուհետև Ստեփանյանի մշակույթի և երիտասարդության պալատի մեծ դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո: Ն. Ստեփանյանի սխրակից կենսուղու մասին զեկուցմամբ հանդես եկավ ԼՂՀ պաշտպանության բանակի ռազմաօդային-ավիացիայի դաստիարակության և հասարակական կազմակերպությունների հետ կապերի բաժնի պետ, գնդապետ Բարեղան Մուրադյանը: Չեկուցողը հանգամանակից անդրադարձավ Ն. Ստեփանյանի կյանքի իշխանունքը դրվագներին՝ ընելով, որ նոր սերունդը հայրենասիրության լիցքեր է ստանում նրա վառ օրինակից: Երդման մնան է հնչում Ն. Ստեփանյանի նամակը՝ հղված Զայաստանի ԿԿ քարտուղար Գրիգոր Զարուստյանին: «Զարգելի Գրիգոր Արտեմի, հայ ժողովրդի ջերմ սերը ինձ պարտավորեցնում է նորանոր, էլ ավելի մեծ սխրանքների: Պարտավորեցնում է բարձր պահել հայ ռազմիկների պատիվը, որոնք ռուս մեծ ժողովրդի հետ միասին մարտնչում են հանուն մի ընդհանուր գործի: Ու ես հավաստիացնում եմ Ձեզ, որ այդ վստահությունը կարողացանք մինչև վերջ, քանի դեռ կաբախի սիրտս: Դուք դրանում կհամոզվեք մոտ ժամանակներս, հենց որ հասնեմ իմ սիրելի Լենինգրադ»: Նա այդ երդմանը հավատարիմ մնաց մինչև վերջին շունչը՝ բարձր պահելով իրեն ծնող հայ ժողովրդի պատիվը: Իսկ այդպիսի զավակներին ժողովուրդը չի մոռանում՝ լինի 100 թե 1000 տարի հետո:

Զորեյանական երեկոյին ելույթ ունեցան նաև ԼՂՀ աշխատանքի և Զայրենական մեծ պատերազմի վետերանների խորհրդի նախագահ Սերգեյ Բարսեղյանը և Մարտունու Նելսոն Ստեփանյանի անվան դպրոցի ուսուցիչ Արամ Խաչատրյանը՝ վերստին շեշտելով խիզախ արցախցու օրինակով գալիք սերունդներին դաստիարակելու անհրաժեշտությունը:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է «ԴԻԶԻԹԵ-2014»-Ը

Մարտի 27-30-ը ԼՂՀ ԿԳՆ հովանու ներքո գործող Վանք գյուղի «Գանձասար» ճամբարը հյուրընկալել էր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի շուրջ 70 հոգանոց պատվիրակությունը: Վանքի Գուրգեն Զայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի դահլիճում մարտի 29-ին տեղի ունեցավ «Դիզիթե-2013»-ի արդյունքների յուրաքանչյուր ամփոփում-ցուցադրություն և 2014-ի մեկնարկի հայտարարում: Ներկա էին կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը, ԼՂՀ ԿԳ փոխնախարար Միքայել Զամբարձունյանը, աշխատակազմի ղեկավար Էրիկ Գրիգորյանը:

Ողջունելով ճամբարի մասնակիցներին՝ Ա. Բլեյանն ասաց, որ այն հավանում է դառնալ միջազգային: Եթե նախորդ տարի մասնակիցները միայն սեբաստացիներն ու արցախցիներն էին, ապա այս անգամ ընդարձակվել է ճամբարի աշխարհագրությունը. ընդգրկվել են ներկայացուցիչներ նաև Լճուռ, Վայոց ձորի մարզերից, հաջորդ տարվա համար հայտ են ներկայացրել Վրաստանից:



Արցախի ներկայացվածությունը նույնպես մեծացել է. մասնակիցների մեջ էին Ստեփանակերտի, Ասկերանի շրջանի մի քանի գյուղերի և, բնակամասբար, Վանքի երեխաները: Ճամբարը նաև ավելի «փոքրահասակ» է դառնում. եթե անցյալ տարի գալիս էին 10-12-րդ դասարանների սովորողները, ապա հիմա՝ սկսած 5-րդ դասարանից: «Եվ դա բնական է, քանի որ թվային միջոցները հայտնվում են ավելի ու ավելի ցածր տարիքի երեխաների ձեռքում», - ասաց Ա. Բլեյանը:

Մասնակիցները նախ կատարեցին ԶԳ և ԼՂՀ օրհներգերը: Այնուհետև ցուցադրեցին տարբեր թեմաներով իրենց անհատական ստեղծագործությունները՝ ինչպես իրենք, այնպես էլ Ա. Բլեյանը հրմթացս պարզաբանում տալով: Դրանք ուսումնական փոքրիկ ֆիլմեր էին, որոնցում երևում են հեղինակների ստեղծագործական կարողությունները: Գնահատելի են նրանց խոսքի մշակույթը, թարգմանական հմտությունը, տեխնիկական, տեղեկատվական իրազեկվածությունը և այլն:

«Մեդիակրթությունը մարդուն ինքնավստահություն է ներշնչում, ինչպես նաև ամենակարճ ճանապարհն է հայտնի դառնալու: Դա նախ և առաջ, գյուղական դպրոցների համար է, որպեսզի նա իրեն զգա իրադարձությունների կենտրոնում», - ասաց Ա. Բլեյանը՝ կոչ անելով ավելի ակտիվորեն մասնակցել «Դիզիթե-2014»-ին և հայտարարելով նրա մեկնարկը: Ծրագրերին կարող են ծանոթանալ կայքում, իսկ վաղ մեկնարկի պատճառով ավելի լավ պատրաստվելու համար է: Մոտակա ծրագրերից մեկը էկոտուրն է, որը կանցկացվի այս ամիս, և որտեղ կքննարկվեն բնապահպանական հարցեր: Ա. Բլեյանն առաջարկեց արցախցիներին, մասնավորապես, Վանքի երեխաներին՝ իրենց ուսուցիչների հետ մասնակցել՝ այժմվանից թեմա ընտրելով, ինչպես, ասենք, «Աղբահանության խնդիրները Վանք գյուղում»: Ի դեպ, «Գանձասար» մուտք գործելով՝ սեբաստացիների առաջին գործն է եղել շրջակայքի մաքրությանը զբաղվելը: Զաջորդ օրերին աշխատանքի ուղղություններից մեկը եղել է ճամբարի գրադարանը կարգի բերելը: Այդ ամենի մասին կարելի է տեղեկանալ կայքից:

Ա. Բլեյանը տեղեկացրեց, որ այդ պահին կրթահամալիրի 60 հոգանոց մի խումբ՝ արվեստի գծով դպրոցի սաները, գտնվում է Վրաստանում, արհեստագործական խումբը՝ Վայոց ձորի խնձորուտ գյուղում, մեկ այլ խումբ՝ Լճուռ մարզում, որտեղ համապատասխան ուղղություններով աշխատանքներ են տանում:

ԼՂՀ ԿԳ փոխնախարար Մ. Զամբարձունյանը, ողջունելով կրթահամալիրի նախաձեռնությունները, հույս հայտնեց, որ փոխվումները կընդարձակեն նաև Արցախի աշխարհագրությունը «Դիզիթե-2014»-ին: Իսկ աշխատակազմի ղեկավար Է. Գրիգորյանն աշխարհագրական նման ընդարձակում ակնկալեց սեբաստացիների կողմից նաև «Ասպետ» ռազմամարզական ճամբարում: Ա. Բլեյանը տեղեկացրեց, որ Մայիսյան եռատնի կապակցությամբ պատրաստվում են «Մշակութային Շուշի» ծրագրին:

Թվային միջոցների կիրառմամբ ուսումնական գործընթացը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու առավելությունը գնալով ավելի տեսանելի է դառնում: Մեդիակրթության հնարավորություններից, ցավոք, Արցախի շատ գյուղական բնակավայրերի դպրոցականները չեն կարողանում օգտվել այն պարզ պատճառով, որ համացանցը հասանելի չէ նրանց: Օրերս «Միմուսիս Արմենիա», «Ղարաբաղ Տեղեկոմ» ընկերությունների և Արցախի պետական համալսարանի միջև եռակողմ համաձայնագրի կնքման կապակցությամբ տեղի ունեցած միջոցառման ժամանակ այս խնդրի առնչությամբ հարց ուղղեցինք «ԴՏ»-ի գլխավոր տնօրեն Ռաֆֆ Յիրիկյանին: Նա պատասխանեց, որ ընկերությունը լայնածավալ աշխատանքներ է կատարում այդ ուղղությամբ, նաև որակյալ ենթակառուցվածք ունենալու համար, որպեսզի Արցախի ողջ տարածքին հասանելի լինի համացանցը: Մի մասը կիրականացվի այս տարի, մյուս մասը՝ հաջորդ:

Սեֆ. լրատվություն

ՈՒՍՈՒՑՈՒՄ

ԱՅՍԵՂ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԵՐԿՐԻՆ ԱՆՐԱՎԵՐՅՑ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ

Մարտունու արհեստագործական դպրոցը հանրապետությունում գործող միակն է իր տեսակի մեջ, որ գործունեությունը չդադարեցրեց իր սկզբնավորման առաջին օրից մինչ այսօր: Այն մնաց հարազատ նպատակին, այստեղ այսօր էլ շարունակում են պատրաստել մեր տնտեսությանը խիստ անհրաժեշտ մասնագետներ:

Ինչպես տեղեկացնում է արհեստագործական դպրոցի տնօրեն Ալավիկ Չարայանը, այս ուսումնականում դպրոցում գործում են 14 խմբեր. ավտովարորդների՝ 3, տրակտորիստների՝ 3, վարսահարդարների՝ 2, դերձակների՝ 2, հյուսնատաղձագործների՝ 1, սալիկապատողների՝ 1, հրուշակագործների՝ 1 և եռակցողների՝ 1: Սովորողների քանակը կազմում է 204 հոգի: Ունեն 57 աշխատող, որից՝ 16 վարպետներ, 16 ուսուցիչներ:

2011-2012 ուստարվա համեմատությամբ այս ուսումնականում սաների թիվը նվազել է. անցած ուսումնականում այն եղել է 251: Տնօրենը հույս հայտնեց, որ 2-րդ կիսամյակում նրանց թիվը կավելանա դպրոցներում ուսման առաջադիմություն չապահովող սովորողների հաշվին, քանի որ ընդհանուր հոսքի երեխաների մի մասն արդեն կարող է հասկանալ, որ իրենց համար արհեստագործական դպրոցում սովորելը շատ ավելի արդյունավետ ու օգտակար կլինի, քան դպրոցում անհիմաստ ժամանակ սպանելը, և կփորձեն ուսումը շարունակել այստեղ, ինչը նրանց կտա և՛ միջնակարգ, և՛ որակյալ մասնագիտական կրթություն:

Ս. Չարայանը նշեց, որ այսօրվա դրությամբ արհեստագործական դպրոցի հիմնական ուշադրությունը սևեռված է գյուղատնտեսական մասնագետների պատրաստմանը: Ավարտածները դառնում են որակյալ մասնագետներ ու վստահորեն իրենց գործունեությունը ծավալում: Տրակտորիստների մի մասն օգտագործում է սեփական կամ վարձակալությամբ ձեռք բերված տեխնիկա, ու պահանջարկ ունեն հասարակության կողմից:

Տնօրենը խոսեց մի լուրջ խոչընդոտի մասին, որ առկա է ուսուցման ընթացքում. տրակտորիստներին և ավտովարորդներին վկայականներ տրամադրում են 18 տարեկանը լրանալուց հետո, սակայն եթե ավտովարորդներն իրավունք ունեն մինչև 18 տարեկանը, այսինքն՝ վկայականն ստանալու տարիքը, ավարտական քննություն հանձնել, ապա տրակտորիստներն իրավունք ունեն այն հանձնել միայն 18 տարին լրանալուց հետո, ասել է թե՛ մինչ ժամկետային ծառայությունը սկսելը շրջանավարտը չի հասցնի քննությանը:

Փաստորեն սովորողը, որ արդեն ունի մասնագիտական կրթություն, յուրաքանչյուր է համապատասխան դասընթացը, վկայականի բացակայության պատճառով զինվորական ծառայության ժամանակ չի կարող այն օգտագործել: Ծառայությունն ավարտելուց հետո նոր մի-

մադրվում է գումար, որով գնում են հունք և թողարկում արտադրանք: Այս կերպ փորձում են լուծել շատ հարցեր: Մասնակի լուծում են դպրոցի կոշտ կահույքի հարցը, դասասենյակները վերանորոգում, արտահագուստ կարում տարբեր մասնագիտություններով սովորողների համար: Պայմանագիր են կնքում շրջանի հողօգտագործողների հետ, մշակում են ցորենի և արածիքի տարածքները, որոնք ստացած եկամուտը փոխանցվում է դպրոցի ֆոնդ: Այդ եկամուտներով ձեռք են բերվել շարքացան, կոմբայնի համար շարժիչ, զոդման ապարատ, օգտագործվող տեխնիկայի պահեստամասեր: Գործում է «Արտադրական ուսուցման ժամերին սովորողների կողմից պատրաստված ապրանքների գնահատման և ուսումնարանի հաշվեկշիռ մուտքագրելու համար»

հանձնաժողովը, որը վերահսկողություն է իրականացնում այս ուղղությամբ կատարվող աշխատանքների վրա: Փաստն, իրոք, շատ ողջունելի և ուսանելի է ու կիրառվում է առաջին անգամ:

Դպրոցի բակում սալիկապատողների խմբի սովորողների կողմից կառուցվում է հուշադրույր՝ Արցախյան ազատամարտում նահատակված ուսումնարանի շրջանավարտների հիշատակին, որն արդեն ավարտման փուլում է:

Դպրոցն ունի բազում խնդիրներ, որոնք կապված են ժամանակակից, նոր տեխնիկայի և պահեստամասերի, ուսումնական գրականության բացակայության, դասարանների վերանորոգման, մարզադահլիճի կառուցման անհրաժեշտության ու այլ հարցերի հետ: Տնօրենը հույս կայտնեց մոտ ապագայում դրանք լուծված տեսնել:

Դրա հետ մեկտեղ նա երախտագիտության խոսք ասաց երկրի, շրջանի ոլորտի պատասխանատուների հասցեին՝ բավականաչափ գումար տրամադրելու համար, որի շնորհիվ փոխվել է ուսումնարանի շենքի մի հատվածի տանիքը, վերանորոգվել մասնաշենքը:

Ս. Չարայանը նշեց, որ տարեցտարի արհեստագործական դպրոցի առաջընթացը նկատելի է դառնում, ինչը միայն ուրախանալու տեղիք է տալիս:



այն ԼՂԶ ԿԳ Ուսարարության կից գործող համապատասխան հանձնաժողովին քննություն է հանձնում, որից հետո նրան տրվում է վկայական:

շարքացան, կոմբայնի համար շարժիչ, զոդման ապարատ, օգտագործվող տեխնիկայի պահեստամասեր: Գործում է «Արտադրական ուսուցման ժամերին սովորողների կողմից պատրաստված ապրանքների գնահատման և ուսումնարանի հաշվեկշիռ մուտքագրելու համար»

ԵՐԵՒԱՅԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ` ԶԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնները լուրջ դերակատարություն ունեն երեխաների ճիշտ և առողջ զարգացման գործում: Դրանք նպաստում են նրանց գեղագիտական դաստիարակությանը, ստեղծագործական ունակությունների հայտնաբերմանն ու զարգացմանը:

Մարտունու ՄՊՍԿ-ն երկար տարիների պատմություն ունի և գործում էր տարբեր ծավալներով: Այն եղել ու մնացել է որպես մի օջախ, որը ձգում է շնորհաշատ ու նուրբ հոգի ունեցող մեր երեխաներին: Կենտրոնի տնօրեն Մարինե Պետրոսյանը հիաստունըրով է խոսում այստեղ իրականացվող աշխատանքների մասին: Կենտրոն համախումբ է 374 երեխա: Գործում է 34 խումբ, որից 10-ը՝ Մարտունու քաղաքում, 24-ը՝ շրջանի համայնքներում: Գործում են գրեթե բոլոր հեյուրագործության, ասեղնագործության, մաքրամեծի, կար ու ձևի, ժանեկագործության, շյուղագործության, կարպետի, փափուկ խաղալիքի, նկարչության, ասմունքի, հմուտ ձեռքերի, տնարարության, ուլունքագործության, հյուսվածքագործության խմբեր: Պարապմունքներն անց են կացվում հանրակրթական դպրոցներում, դասերից հետո: Տնօրենի խոսքով՝ որոշ խնդիրներ այս ուղղությամբ առաջանում են, բայց ընթացքում հարթվում են:

Բոլոր խմբերում էլ երեխաները մեծ հաճույքով են ներկայանում: Առանձնահատուկ նշվեց նկարչության խմբի երիտասարդ խմբակավարի ունակությունների մասին, ում պարապմունքներին երեխաները մի առանձին ոգևորությամբ են մասնակցում:

Կենտրոն համախող երեխաների մոտ ձևավորվում են գեղագիտական ճաշակ, գեղեցիկն ընկալելու, ստեղծելու ունակություններ, սեր՝ երաժշտության, բանաստեղծության նկատմամբ:

Երեխաների ստեղծագործությունները ցուցադրվում են ցուցահանդեսներում: Սա և՛ խթան է, և՛ պարտավորեցնող հանգամանք:

Թեմաներ ընտրելիս հաշվի են առնվում երեխաների տարիքային առանձնահատկությունները: Այստեղ սովորողները խրախուսվում են, որի ամենակարևոր ձևն այն է, որ նրանց իրավունք է տրվում սեփական գործերը տուն տանել: Սա մեծ ոգևորություն է առաջացնում և նրանց շահագրգռում ավելի շատ գործեր ստեղծել ու նվիրել հարազատներին, բարեկամներին: Օգտագործվող նյութերը տրամադրում է կենտրոնը:

Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն են համախումբ նաև բնատուր տաղանդով օժտված երեխաներ, և արվեստը նրանց համար հետազայում կդառնա մասնագիտություն:

Երեխաների ստեղծած գործերը նման են

իրենց՝ լուսավոր ու վառ գույներով:

Ստեղծագործական կենտրոնի սաները և խմբակավարները հաճախակի են մասնակցում քաղաքային, շրջանային և հանրապետական մրցույթ-ցուցահանդեսների և առաջնակարգ տեղեր գրավում: Սա, իհարկե, ոգևորում և նոր լիցք է հաղորդում կենտրոնում իրականացվող աշխատանքներին: Այսպես՝ եռատոնի նվիրված ասմունքի շրջանային մրցույթում Անուշ Մարտիրոսյանը գրավել է 3-րդ տեղը, Շուշի քաղաքում անցկացված՝ Անկախության օրվան նվիրված «Շուշիի հրեշտակ» հանրապետական մրցույթում խմբակավարներ Անահիտ Դավթյանյանի կարպետի աշխատանքը գրավեց առաջին, իսկ Դասմիկ Սարյանի գործերն էլ աշխատանքը՝ 2-րդ տեղը: Մարտունու



քաղաքում կազմակերպված մրցույթ-ցուցահանդեսին ներկայացրած իրենց գործերով Կարինե Զալյանը (մաքրամեծ) գրավել է առաջին տեղը, Դասմիկ Սարյանը (գրեթե)՝ 2-րդ տեղը, Սուսան Դարոյանյանը (հյուսվածքագործություն)՝ 3-րդ տեղը: Աշխատանքային պատշաճ պայմանների առկայության դեպքում հնարավոր կլինի երեխաների հետ շատ ավելի հետաքրքիր ու որակյալ աշխատանքներ ստեղծել, ինչու չէ՞ դրանք վաճառքի հանել, որից ստացած հասույթը կարող են օգտագործել ավելի որակյալ և բազմազան հունք ձեռք բերելու համար:

Տիկին Պետրոսյանի խոսքերով՝ օրվա դրությամբ կենտրոնի տնօրենությունը տեղավորված է շրջկենտրոնի հ. 2 հիմնական դպրոցի մասնաշենքում, և հույս ունեն ապագայում ունենալ սեփական շենք և նպաստավոր պայմաններ, ինչը կարևոր խթան կդառնա իրականացվող աշխատանքների առավել ակտիվացման ու, բնականաբար, նոր ծրագրերի ստեղծման, նրանց կյանքի կոչման համար:

ԱՐՎԵՍԻ ԳՊՐՈՋԸ ԼՈՒՐԳ ԽՈՐԱՆ ԵՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԶԱՄԱԿՈՂՄԱՆԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԶԱՄԱՐ

Այսօր առավել քան դժվար է գյուղական կյանքը, առավելապես նրանում ապրող երիտասարդության համար: Այն շատ բանով պայմանավորված է նրանով, որ ազատ ժամանցի կազմակերպման վայրերն են բացակայում, երեխաների առօրյան միահյուսվում է ծնողների կենցաղային խնդիրների լուծմանը: Եվ ծնողների համար լուրջ խնդիր է իրենց երեխաների մանկությունը և պատանեկությունը բովանդակալից, հագեցած դարձնելը: Այս առումով բավականին օժանդակում է դպրոցում նրանց հետ տարվող աշխատանքը:

ճարտարը հանրապետության ամենամեծ գյուղն է: Այն ունի 4 դպրոց, և նրանցում սովորողների համար անչափ կարևոր է ոչ միայն հանրակրթությունը, այլ նաև դասերից հետո ազատ ժամանակի օգտագործումը: Այստեղ բավականին լուրջ և կարևոր նշանակություն ունի գյուղում գործող արվեստի դպրոցը:

Դպրոցի բացումը բավականին մեծ ոգևորությամբ ընդունվեց: Տնօրենը երիտասարդ էր, ունեին դասատուների, շենքային պայմանների, երաժշտական և այլ գործիքների ու նյութերի պակաս: Գործունեության կարճ ընթացքում հաջողվեց հարթել բազում խնդիրներ, այն գյուղի երեխաներից շատերի համար դարձավ երկրորդ կրթության ու հետաքրքիր ժամանցի վայր:

Արվեստի դպրոցի տնօրեն Ապրես Մարգարյանի հետ զրուցելիս տեղեկանալու դպրոցում իրականացվող աշխատանքների մասին: Զրուցակիցս նշեց, որ «ճարտար արվեստի դպրոց» ՊՈԱԿ-ը ստեղծվել է ԼՂԶ կառավարության որոշմամբ՝ 2010թ. հոկտեմբերի 26-ին և գործում է 2011թ. հունվարի 10-ից: Ստեղծվեցին նախապատրաստական խմբեր, ընդգրկվեցին 256 աշակերտներ:

Դպրոցում աշխատում են 22 դասատուներ, որոնց մեծ մասը՝ Մարտունու Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցից, և աշխատում են համատեղության կարգով:

2012թ. սեպտեմբերի 1-ից դպրոցում սովորում էր 180 աշակերտ: Աշակերտների թվի կրճատումը կապված էր ԼՂԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից 2011թ. օգոստոսի 16-ին հաստատված ուսումնական պլանով ասեղնագործություն, շյուղագործություն, գրեթե մասնագիտությունների, նաև նախապատրաստական խմբերի կրճատում:

մով: Ներկա դրությամբ դպրոցում գործում է 5 բաժին՝ 11 մասնագիտությամբ, սովորում է 155 աշակերտ, դասավանդում 26 դասատու:

Դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքը չի սահմանափակվում միայն դասարաններում: Կազմակերպվում են արտադպրոցական մրցույթ-ստուգատեսներ, հաշվետու համերգներ:

Դպրոցի խնդիրն աշակերտների գեղագիտական դաստիարակությունն ապահովելուց բացի նաև հանրության շրջանում ազգային մշակույթի ու արվեստի քարոզումն է, գյուղի մշակութային կյանքի զարգացումը: Դպրոցն իր գործունեության ընթացքում տվել է 3 հաշվետու համերգ, կազմակերպել 2 ցուցահանդեսներ, մշտապես մասնակցում է Մարտունու շրջվարչակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի կողմից տոն և նշանավոր օրերին կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին:

Կերպարվեստի պլեներային դասաժամեր են անցկացվել Եղիշեի, Ամարասի վանքերի տարածքներում և մի շարք այլ տեսարժան վայրերում:

Փորձի փոխանակում ու համատեղ միջոցառումներ են կազմակերպվել Ստեփանակերտի, Տողի արվեստի դպրոցների, մայրաքաղաքի, Մարտունու ՄՊՍ կենտրոնների, Մարտունու երաժշտական դպրոցի հետ: 2012թ. ապրիլի 12-ին Տողի արվեստի դպրոցի հետ համատեղ կազմակերպվել է համերգ:

2011թ. Մայիսյան եռատոնի առթիվ դպրոցի աշակերտների մասնակցությամբ շուրջապար է կազմակերպվել ճարտարի Բերդ սարի վրա: Իսկ 2012թ. Մայիսի 9-ի առթիվ ԼՂԶ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպված «Շուշիի հրեշտակ» խորագրով ձեռքի աշխատանքի մրցույթում զբաղեցրել է երրորդ տեղը:

2012թ. հոկտեմբերի 23-ին մասնակցել է «Ամաղեուս» մրցույթ-փառատոնին:

Ապրես Մարգարյանը նշեց նաև, որ չնայած ձեռքբերումներին, ճարտարի արվեստի դպրոցը դեռևս ունի բազում խնդիրներ, որոնք պայմանավորված են երաժշտական գործիքների պակասով, շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությամբ, ինչպես նաև այլ խնդիրների կարգավորմամբ:

Էջի Կյուլեթը Կարինե ԴԱՐԱՍՅԱՆ

ԻՍԱՑՈՒԹՅԱՆ ԱՐԲՅՈՒՐ

ԳԵՂԵՏԻԿ ԽՈՍՔԸ ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹՅՈՒՆ Ե ՊԱՐԱՆՋՈՒՄ

Ինչպես գիտենք, անցած տարին՝ 2012 թվականը, քաղաքամայր Երևանի համար պատվաբեր տարի է եղել, քանզի Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը լինելուց բացի, այն համարվել է Գրքի համաշխարհային մայրաքաղաքը:

Սա, իհարկե, մեծ պատիվ է, հպարտություն աշխարհով մեկ սփռված հայության համար, հատկապես հայկական երկու հանրապետությունների՝ Հայաստանի Հանրապետության և թեկուզ չճանաչված, բայց մեզ համար կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար: Խորհրդանշական այն է, որ երկու հանրապետությունների պետական լեզուն էլ հայերենն է, և սկիզբնապես հայտնության հետ միասին թե Հայաստանում և թե՛ Արցախում 2012 թվականը նշվեց որպես հոբելյանական տարի՝ նվիրված հայերեն առաջին տպագիր գրքի՝ «Ուրբաթագրքի» 500-ամյակին:

Մենք՝ հայերս, պարտավոր ենք գիտակցել և միշտ հիշել, որ գեներով, արյան գնով ազատագրված հայրենիքը գրքով պետք է պահել:

Մեծ է գրքի նշանակությունը մեր ազգային պատմության գործում, ինչպես նաև մեր ժողովրդի՝ պաշտամունքի հասնող սերը գրքի հանդեպ: Ազգի դեմքը մշակույթն է, իսկ գիրքը՝ ազգի դիմագիծը բնորոշող տարրը: Շատ հնուց է հայը գրի պաշտամունք ունեցել, և շատ ազգեր չէ, որ պատիվ ունեն մշակույթն ազատության 500-ամյակ:

Կա տեսակետ, թե ընթերցողը հեռացել է գրքից: Սա, իհարկե, ունի իր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Պարզապես պետք է գիրքը մոտեցնել ընթերցողին, հատկապես

երիտասարդությանը: Վերջիններս նախընտրում են գրքի էլեկտրոնային տարբերակը, որը և պետք է մատչելի դարձնել նրանց համար:

Ուրախալի է, որ Երևանի «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը Ստեփանակերտում բացել է գրատուն («Մեզ» առևտրի կենտրոնի 3-րդ հարկ)՝ նվիրված գրատպության 500-ամյակին: Անել է թե՛ մենք ունենք հոգևոր արժեքների այն օջախը, որտեղ յուրաքանչյուր գրասեր կարող է գտնել իր ցանկացած գիրքը: Իսկ մարդուն գրասեր պետք է դարձնել մանկուց: Հետևաբար, ծնողներն իրենց երեխաներին դեռ փոքրուց հաճախ պետք է ուղեկցեն գրատուն՝ նրանց համար գեներով նկարագրող, պատկերազարդ մանկական գրքեր, որով շատ է հարուստ մեր գրատունը:

«Երևան-2012. Գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառման շրջանակներում Երևանի «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը, նրա կողմից հրատարակվող «Ուրախ գնացք» մանկական, «Իմ մոլորակը» պատանեկան ամսագրերը և Երևանի քաղաքապետարանը 2012թ. ապրիլին հայտարարել են «Ժամանակ մի կորցրու, կարդա» նշանաբանով Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթը, որը կտևի մինչև 2013թ. մայիս ամիսը:

Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթը կազմակերպող շահագրգիռ կողմերը՝ որպես գործընկեր, ներգրավել են նաև ԽՍ. Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ա. Տեր-Գրիգորյանի անվան հայոց լեզվի և տարրական ուսուցման մե-

թողիկայի ամբիոնը՝ մրցույթի մասնակիցներին անաչառ գնահատելու համար: Հանձնախմբի կազմում ընդգրկված են նաև մանկագիրներ և դասագրքերի հեղինակներ:

Մրցույթի նպատակն է երեխաների շրջանում բարձրացնել ընթերցանության և ընթերցասիրության մակարակը, քանզի գեղեցիկ խոսք կառուցելու համար առաջնահերթ պահանջվում ընթերցասիրություն և գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցանություն:

Մրցույթն անցկացվում է տարիքային երկու խմբերի՝ 3-5-րդ և 6-8-րդ դասարանների աշակերտների միջև, երկու ուղղվածությամբ՝ արձակ և չափածո: Այն նախատեսված է անցկացնել երեք փուլով՝ ընտրական, որը համապատասխանում է շրջանային (քաղաքային) փուլին, կիսաեզրափակիչ կամ մարզային (մեզ համար՝ հանրապետական) և եզրափակիչ, որը կանցկացվի Երևանում՝ մայիս ամսվա սկզբին:

Մրցույթի մասնակից յուրաքանչյուր տարիքային խմբի համար նախատեսվել է փաթեթ-հայտ, որը դպրոցներին է տրամադրվել անցած ուսումնական տարվա վերջում՝ ապրիլ ամսին, ինչպես նաև յուրաքանչյուր խմբի համար՝ երեքական գրափունջ և անգիր հանձնարարվող բազմաթիվ գրքեր, որից հետո հայտագրվել մրցույթի ընտրական՝ քաղաքային փուլին մասնակցելու հա-

մար:

Վերջերս կայացավ մրցույթի քաղաքային փուլը, որին հայտագրվել էին 1-ին տարիքային խմբից (3-5-րդ դաս.) մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների 46, 2-րդ տարիքային խմբից (6-8-րդ դաս.)՝ 35 աշակերտներ: 1-ին տարիքային խմբի աշակերտները ներկայացրին իրենց փաթեթ-հայտում ընդգրկված Հովի. Թումանյանի լավագույն երեք հեքիաթները՝ «Ծամփորդները», «Սուտիկի որսկանը», «Սուտասանը» և անգիր հանձնարարված բանաստեղծությունների ցանկից 5 բանաստեղծություն, իսկ 2-րդ տարիքային խմբի աշակերտները՝ Հովի. Թումանյանի լավագույն երեք բալլադները՝ «Աղավաղված», «Փարվանա», «Ախթաբան» և իրենց տարիքային խմբի անգիր հանձնարարված բանաստեղծությունների ցանկից հինգ բանաստեղծություն:

Մասնակիցներից ոչ բոլորը կարողացան հանձնարարված ստեղծագործությունների վերաբերյալ իրենց կարծիքը, տեսակետը ներկայացնել գեղեցիկ, կապակցված խոսքով: Աշակերտների ընթերցանության տեխնիկայից իսկ հասկանալի էր, որ ստեղծագործությունները նրանք ընթերցել են ընդամենը 1-2 անգամ, որը բավարար չէ ստեղծագործության վերաբերյալ տեսակետ ներկայացնելու համար:

Հանձնարարված ստեղծագործությունների շուրջ ուսուցիչների կողմից վերլուծական, բառային աշխատանք քիչ է տարվել, որի համար էլ աշակերտները դժվարանում էին տրամաբանական եզրահանգումներ կատարել:

Ցավովի է, որ մեր դպրոցներում

հայոց լեզվի և գրականության ուսուցիչների ու գրադարանավարների կողմից վաղուց մոռացության են մատնված նախկինում ավանդույթ դարձած այս կամ այն գրքի, հատկապես նոր գրքի քննարկման աշխատանքները, որով և աշակերտների մեջ ընթերցասիրություն է դաստիարակվում:

Այսպեսով հանդերձ, մրցույթի քաղաքային փուլում մեր աշակերտներից շատերը հաջողություններ ունեցան և մրցանակային տեղեր զբաղեցրին. 1-ին տարիքային խմբի 46 աշակերտից՝ 12 մրցանակային (երկու 1-ին տեղ, վեց 2-րդ տեղ, չորս 3-րդ տեղ), իսկ 2-րդ տարիքային խմբի 36 մասնակցից՝ 14 մրցանակային տեղ (չորս 1-ին տեղ, երեք 2-րդ տեղ, յոթ 3-րդ տեղ):

Մրցույթի հանրապետական (կիսաեզրափակիչ) փուլին, որը կանցկացվի ապրիլի 1-10-ն ընկած ժամանակահատվածում, մասնակցելու իրավունք կունենան երկու տարիքային խմբերի 1-ին և 2-րդ մրցանակային տեղեր զբաղեցրած 15 աշակերտ:

Հաջողություն մաղթենք մեր աշակերտներին և հանդգնած ապեմք, որ ընթերցանության համայնքում մրցույթը գեղեցիկ խոսք կառուցելու կարողություն կմշակի աշակերտների մեջ և շոշափելի արդյունքների կարող է հանգեցնել միայն շարունակական լինելու դեպքում:

Գրեպա ԳՐԻԳՈՐՅԱՆ
Սպեխ. քաղաքապետարանի
ԿՄ բաժնի գլխավոր մասնագետ
Մրցույթի քաղաքային փուլի
հանձնաժողովի նախագահ

ԼԱՎ ԸՆԹԵՐԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԼԱՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԵՐԱՆԻՔԸ

Շատ հաճախ աշակերտները փոխադրվում են դասարանից դասարան՝ առանց տիրապետելու սահուն, արտահայտիչ ընթերցանության: Ընթերցանության հիմնախնդիրն այնքանով է արդիական, որքան այն առկա է համարյա բոլոր դպրոցներում:

Թեք երեխան չի տիրապետում ընթերցանության տեխնիկային, կարդում է դժվարությամբ, հազիվ բառերը շարկապելով, պարզ է, չի հասկանում կարդացածի իմաստը: Ուստի նա չի կարող առանձնացնել կարդացածի գլխավոր և երկրորդական մտքերը, չի կարող տեսնել շուրջ վերլուծական աշխատանք կատարել, ընթերցել նյութի հիմնական ասելիքը, կոժժարանա ճիշտ և հասկանալի վերարտադրել: Այդ իսկ պատճառով գիրք կարդալը դառնում է անհետաքրքիր, անձամբար, առարկան՝ չսիրված, սխալված չեն լինի, եթե ասեմ՝ այդ առարկայի ուսուցիչն էլ՝ չհարգված:

Մինչդեռ ընթերցանությունը գիտելիքների ձեռքբերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման, գրագետ ու տպավորիչ խոսելու հիմնական աղբյուրն է: Հենց կարդալու միջոցով է զարգանում ու հարստանում աշակերտի երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը, ձևավորվում աշխարհայացքը: Անկասկած, սահուն, հասկանալի ընթերցանությունը նպաստում է նաև մյուս առարկաների «առաջադիմելուն»: Երեխային ընթերցանության, գրքի նկատմամբ սեր դաստիարակելու բանալին գտնվում է ուսուցչի մոտ (առավել ևս՝ տարրական դասարաններում), հենց նրանք պետք է կարդալ սովորեցնեն աշակերտներին ու օգնեն նրանց՝ հարթհարելու կարողություն ընթացքում առաջացած դժվարությունները:

Ինչպե՞ս սովորեցնել գիրք կարդալ, ի՞նչ անել, որ երեխան սիրի գիրքը: Տեղեկատվական հզոր դաշտի լուրջ հայտությունն ինչ-որ չափով խոչընդոտում և առաջադրում է առաջացնում այս հարցերին սպառիչ պատասխան տալու համար: Ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը աշակերտների մեջ պետք է ներարկել 1-ին դասարանից: Իմանալով, որ որքան վաղ է երեխան սկսում կարդալ, այնքան ավելի շուտ է ընթերցանությունը թափանցում նրա հոգևոր աշխարհը: Այս տարիքում ավելի դյուրին է նրանց կապել գրքի հետ: Գրաճանաչությանը զուգահեռ՝ փոքրիկների համար պետք է կարդալ հետաքրքիր հեքիաթներ, ցույց տալ նրանց նկարագրողները և դրդել, որ իրենք էլ սկսեն կարդալ: Այստեղ դասավորելի ամենահուսալի գործընկերները պետք է դառնան մայր ծնողներ-

րը: Նրանք էլ երեխաների համար պետք է կարդան փոքրածավալ հեքիաթներ, այլ ստեղծագործություններ. մոր կենդանի օրինակը կարող է դառնալ նպատակը. չէ՞ որ երեխայի համար մայրը վեր է ամեն ինչից:

Շատ հաճախ է վիճաբանության առարկա դառնում այն, թե դասավոր պե՞տք է, արդյոք, պարտադիր կարդա դասը կամ առաջինը կարդա: Ես այն համոզման եմ, որ նույնիսկ անհրաժեշտ է, որ դասավոր է առաջինը կարդա, և



պարտադիր կարդա նոր դասը: Նախ՝ նա կմատուցի կարդալու տեխնիկան. արտահայտիչ, հուզական ընթերցանությունը լրացուցիչ խթան կլինի, որ աշակերտը սիրի գիրքը: Հետևելով ուսուցչի ընթերցանությանը՝ նկատում է նրա ձայնի երանգային փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են հերոսների ապրումների նկատմամբ տրամադրություն հաղորդելիս: Հետևում է ուսուցչի դեմքի արտահայտությանը, որն օգնում է հերոսի նկատմամբ կարծիք կազմելուն: Ընթերցելով այդ նույն դասը՝ երեխան կփորձի կամ թե ակամա նմանվել ուսուցչին, նույնիսկ հնարավոր է փորձել ամի նպատակին հասնելու համար: Իսկ դա արդեն մի քայլ է ընթերցանության կատարելագործման ճանապարհին: Բոլորս լավ գիտենք, որ մանկական տարիքում կարդացած գիրքն ամբողջ կյանքում հիշվում է և ազդում է մարդու մտավոր զարգացման վրա: Դասավորները լավ գիտեն, թե երեխայի համար որքան դժվար է կարդալու տեխնիկային տիրապետելը, առավել ևս, դժվար է իսկական ընթերցող ձևավորելը: Այստեղ գլխավորը ընթերցանության կազմակերպումն է այնպես, որ այն խթանի անձի զարգացմանը, իսկ զարգացած անձը մշտապես կարիք է զգում ընթերցանության: Եվ ուսուցիչը, և ծնողը պետք է հետևեն, որ

երեխաների կողմից ընթերցվող գրքերը լինեն տարաբնույթ թեմաներով. հանրամատչելի, արկածային, հայրենասիրական գրքերն ու հեքիաթները շատ ավելի հետաքրքրալից են ընթերցվում:

Ուսուցչի պարտականությունների մեջ է մտնում աշակերտի ինքնուրույն ընթերցանության համար գրքերի ընտրությունը, որոնք նախ պետք է համահունչ լինեն դպրոցական ծրագրերին, ինչպես նաև աշակերտների հակումներին, տարիքային առանձնահատկություններին, հետաքրքրություններին դաշտին: Արդեն սկսած 3-4-րդ դասարաններից, հարկ է, որ երեխան հատուկ տեսքի մեջ սկսի գրառումներ կատարել կարդացած գրքի կամ պարզապես ստեղծագործության մասին: Հաստիկ այլուհանում մշակել հեղինակի, գրքի, գլխավոր հերոսների անունները, հետագայում նաև անձանոթ բառերը, դարձվածքները, թևավոր խոսքերը, որոնց շատերի բացատրությունը կստանա դպրոցում: Դա նաև վկայություն է, թե դասարանում, ընկերական շրջապատում ով ավելի շատ գրքեր, ստեղծագործություններ է ընթերցում: Օգտակար կլինի նաև առաջարկել շնորհալի աշակերտներին կատարել կարդացած հեքիաթների, առակների նկարագրողները՝ հերոսների կամ դուր եկած հատվածները դրվագներով պատկերելու համար: Դա կօգնի աշակերտներին լավ հասկանալ և հիշել կարդացածը: Անհրաժեշտ է համառորեն երեխայից պահանջել գրքի վերնազիպը, հեղինակի անուն-ազգանունը, ծանոթ է այդ հեղինակի այլ ստեղծագործությունների: Այս բոլորը կնպաստեն հիշողության մարզմանը: Երեխան պետք է կարդա ուշադիր, առանց շտապելու:

Ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու միջոց է նաև բանավոր խոսքի զարգացումը, այն է՝ կարդացածը վերապատմելը, վերարտադրելը: Կարևոր նշանակություն ունի ստեղծագործական կարողությունների վերհանումը: Շատ երեխաներ գրական փորձեր են անում դեռևս դպրոցական նստարանից: Այս փաստը պետք է կապել ընթերցանության, շատ գրքեր կարդալու հետ: Բոլոր միջոցներն օգտագործել նրանց առաջին թոթովանքները որևէ թերթում կամ ամսագրում տպագրելու համար:

Տարրական դասարաններում սկսած աշխատանքը պետք է ճիշտ ձևով շարունակել միջին օղակում՝ սկսած 5-րդ դասարանից: Առաջին լուրջ դժվարությունն այն է, որ մայրենին արդեն դասավանդելու է ուրիշ ուսուցիչ: Նրա առաջին պարտականություններից մեկն այն է, որ արագ տիրապետի աշակերտների կարողություններ-

րին, նախասիրություններին, գեղարվեստական գրքի նկատմամբ նրանց հետաքրքրություններին, որպեսզի ժամանակին ուղղորդի գեղարվեստական գրքերի ճիշտ ընտրությունը: Հենց այս տարիքից էլ ուսուցիչը պետք է հոգ տանի, որ աշակերտը, ընթերցելով գեղարվեստական գրականություն, կարողանա ընկալել երկի գեղագիտական, բարոյահոգեբանական, դաստիարակչական արժեքները: Կարողանա խորհել ընթերցածի շուրջ, գնահատել հերոսների արարքները, ընտրել իրենց սիրած հերոսներին, որոնց կծոկներն նմանվել կյանքում, կրահել ստեղծագործության առաջ քաշած խնդիրները և որ շատ կարևոր է, զուգահեռներ անցկացնել իրենց և գրական կերպարների միջև: Կարևոր պահ են համարում դասարանում ուսուցչի, դասուղեկի հետ միասին վերլուծել, քննարկել ստեղծագործությունը:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության զարգացմանը նպաստում է նաև արտահայտարարական ընթերցանության ճիշտ կազմակերպումը (վաղուց այն դուրս էր մղվել դպրոցական ծրագրերից): Դպրոցում ուսուցանվող մայրենիի ծրագրային նյութերի վերաբերյալ ուսուցիչը նախօրոք աշակերտներին հանձնարարում է գրքերի ցանկ և հետամուտ լինում, որ նրանք ժամանակին կարդան: Այս գործում չի բացառվում նաև գրադարանավարի նպաստող աշխատանքը: Հենց նա պետք է աշակերտների ուշադրությունը հրավիրի նոր ստացած գեղարվեստական գրքերի վրա:

Երբ 4-րդ դասարանում սկսեցինք ուսումնասիրել «Ես այսպես ասեմ, դու այնպես հասկացիր» և «Յոթ սարից, յոթ ձորից այն կողմ» (առակներ և հեքիաթներ) բաժինները, առաջարկեցի գրքում ամփոփված թեմաներին զուգահեռ ամեն օր վերապատմել նոր առակ, հեքիաթ, և այնպես ստացվեց, որ աշակերտներից յուրաքանչյուրն ամեն օր աշխատում էր պատմել ոչ թե մեկ, այլ մի քանի առակ կամ հեքիաթ: Արդյունքում նրանք այդ օրերին կարդացան տասնյակ նոր ստեղծագործություններ և ձգտում էին կարդալ այնպիսիները, որ մինչ այդ չէին կարդացել: Փորձը բավականին օգտակար եղավ:

Մի կարևոր պահ ևս: Ընթերցանության կատարելագործման աշխատանքներին պետք է հետևեն բոլոր ուսուցիչները: Իր պարտականությունները թերի կատարած կլինի այն ուսուցիչը, ով կկարծի, թե ընթերցանության նրբություններին հետևելը միայն մայրենիի ուսուցչի գործն է:

Լեվոն ԱՍԱԵՆՅԱՆ
գ. Եսիճան

ԱՐՁԱԳԱՆՔ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Ներկա նամակի համար առիթ դարձավ Ձեր թերթի սույն թվականի մարտի 2-ի թիվ 5-6-ում Ծովինար Գրիգորյանի ստորագրությամբ տպագրված «Ինչու է լուրջան մատնվում և աղավաղվում ճշմարտությունը» հոդվածը, որը, իմ կարծիքով, խորհելու, նաև այլակարծության տեղիք է տալիս: Հոդվածի մասին միանշանակ բացասական կարծիք արտահայտելու միտում չուներ: Հեղինակն, իրոք, իրավացի հարց է բարձրացնում: Այսինքն, եթե ժողովրդավարական երկիր ենք, ապա պետք է արդարացի ու հիմնավոր մոտեցում ցուցաբերենք մեր անցյալին, մեր պատմությանը՝ առանձնահատուկ տուրք տալով այնպիսի անհատներին, որոնք էլիտար դերակատարություն են ունեցել ազատագրական պայքարի և հայրենաշինության գործում: Այս առումով հոդվածագիրը շեշտում է հատկապես Մաքսիմ Հովհաննիսյանի և Ալավիկ Առուշանյանի անունները, որոնք ներկա հանդիսավոր հավաքի կազմակերպիչների ուշադրությունից դուրս են մնացել: Համաձայն եմ դիտողության հետ: Ի դեպ, երկուսն էլ լավագույն ընկերներ ու բարեկամներ են: Մաքսիմ Հովհաննիսյանի հետ երկար տարիների համախոհներ ենք, նրա հովանավորությամբ Շարժման տարիներին՝ 1988-1991 թվականներին, «Ստորգրային Ղարաբաղ» թերթում հոդվածաշար են տպագրել: Երջանցելով այսօրվա թեման՝ ուզում եմ ընթերցողին ներկայացնել 1988թ. հունիսի 18-ի «Ավետական Ղարաբաղ» թերթի համարում տպագրված «Վրիպել ենք՝ շտկենք» վերնագրով իմ հոդվածի հետևյալ տողերը՝ «Այսօր երկրամասի ամենաաղետալի հիմնախնդիրը

մարզի դատարկվող գյուղերի հարցն է: Մեր կարծիքով մարզի հասարակական բոլոր խավերի համար առաջին և սրբազան խնդիրը պետք է դառնա հայրենի օջախի պահպանումն ու շենացումը: Իսկ դրա համար մեզ հզոր բարոյահոգեբանական գեներ է պետք: Այդ գեների անունը հավատ է, հավատ սեփական ուժի ու կարողության նկատմամբ... Ծննդավայրը, երկրամասը հենվից սիրելով չես կարող շենացնել: Ուրեմն՝ չլքենք մեր օջախը, մեր հայրենի երկրամասը ու նաև ապուլապերի գերեզմանները... Միասնական գործերով պատմական Արցախը դարձնենք հողի մշակի, նորածինի ճիչի, իր դարավոր բնակչի հարատևող երկրամաս»: Այսպես ենք բոլորս մտածել ու գործել 25 տարի առաջ: Նշեն, որ Ալավիկ Առուշանյանի հետ իմ առաջին հանդիպումներն սկսվել են նույն 88-ին՝ Կրկնամուն, որն այն ժամանակ ամենաթեժ ու քաղաքի անվտանգության համար կարևոր կետերից մեկն էր: Այստեղ բնակվում էին 300 ընտանիքներից ավելի թուրքեր: Իր մյուս երկու եղբայրների հետ մեկտեղ այդ տարիներին Ալավիկը գիտակցաբար վտանգի է ենթարկել կյանքը: Եղբայրը՝ Սեզոն, սպանվել է ինքնաշեն նռնակներ պատրաստելու ժամանակ: Սա իրողություն է, և պետք է մշտապես հիշել ու գնահատել անցյալը: Այսքանով հանդերձ, կուզեմայի իմ կարծիքն արտահայտել մեկ այլ մոտեցման մասին: Թվում է, թե պարտադիր պայման չէ, և հնարավոր չէ հրապարակում կազմակերպող հանդիսավոր հանրահավաքների ժամանակ տրիբունա հրավիրել բոլոր ակտիվիստներին: Եվ երկրորդ՝ ժամանակը չէ՞, արդյոք, որ

մեր անկախության ավելի քան քսամյա բարձունքից ոչ թե անընդհատ ետ նայենք, մանրամասն մանրությունների մեջ, այլ հարցնենք ինքներս մեզ, թե որքանով ենք լիարժեք օգտագործել հարթանակին հաջորդած խաղաղ տարիները, ինչ պիտի ընթացք ունի մեր վերելքը, ինչու մեր գյուղերն այսքան դանդաղ տեմպերով են բարգավաճում, երբ հիմնականում լուծվել են բարվոք ճանապարհների, գազատարի, հոսանքի, ջրապահովման ռազմավարական հիմնախնդիրները:

Ներկայացված հոդվածում հեղինակը շեշտում է, որ 1988թ. փետրվարի 12-ին Ասկերանի ակտիվիստները եկել են Ստեփանակերտ՝ քաղաքում հանրահավաք կազմակերպելու համար: Դա հաջողվել է փետրվարի 13-ին, և ժողովուրդը աթոթակներ է մոտեցրել և արտահայտել իր կամքը: Հրապարակում հավաքվում է ժողովուրդը, իսկ կազմակերպիչները (այսինքն՝ Ասկերանի ակտիվիստները - Շ.Ա.) չէին իմանում ինչ անեն: Ելույթներ պիտի լինեն, թե ոչ՝ չէին մտածել, ամեն ինչ ստացվել է ինքնաբերաբար: Ծնող սպասումը ցրում է մանկավարժական ինստիտուտի դասախոս Գեորգի Աֆանասյանը իր կրակոտ ելույթով, որ հրապարակ էր եկել ուսանողների հետ մեկտեղ: Ստացվում է, որ Ստեփանակերտի մտավորականությունը քնած էր, իսկ ժողովուրդը միրում էր: Չէ, չեն կարող համաձայնվել հոդվածի հեղինակի հետ: Ժողովուրդը միշտ էլ արթուն է լինում: Թող ների ինձ հոդվածի հեղինակը, եթե ասեն, որ փիլիսոփայական մտածելակերպով ստացվում է, որ, ըստ իր ասածի, Ասկերանի ակտիվիստների կազմակերպած համ-

րահավաքը կրել է անկազմակերպ ու տարերային բնույթ: Պատահականորեն այնտեղ հայտնված ինստիտուտի դասախոսի ելույթի շնորհիվ հավաքը վերածվել է քաղաքական ակցիայի:

Հայտնաբերելով, որ 1988թ. փետրվարի 13-ին առաջինը հրապարակ են եկել ակտիվիստները, որից հետո են միացել նրանց ինստիտուտի ուսանողները, հոդվածագիրը գտնում է, որ այսօր համալսարանը իրավունք չունի ասելու, թե համալսարանի շենքից է սկսվել երթը դեպի հրապարակ:

Ճշմարտությունը վերականգնելու համար նաև պետք է հեռացնել հուշաքարը: Նշենք, որ համալսարանում միայն հուշաքարը չէ: բակում կառուցված է նաև հուշահամալիր նահատակված ուսանողների հիշատակին, որոնց մի մասը, անշուշտ, եղել է փետրվարի 13-ի հավաքի մասնակիցներ:

Այսուհանդերձ, հոդվածագիրը վրդովմունքով հանդիմանում է համալսարանականներին՝ ճշմարտությունն աղավաղելու համար և հուսով է, որ կգտնվի մեկը, որը կհանի հուշաքարը, և այդ ձևով կվերականգնվի իսկությունը: Իսկ ինձ, հարգելի լրագրող, մնում է դարձյալ դիմել հասարակագիտական մտածելակերպին՝ Ղարաբաղյան շարժման իմաստը, էությունը, պատմական մշակությունը չպետք է փնտրել անհատների, առավել ևս, ակտիվիստների ձեռնարկումների ու նրանց գործունեության մեջ: Մեր հակառակորդն է մեր Շարժումը ներկայացնում որպես ակտիվիստների (էքստրեմիստների) ձեռնարկում՝ ժխտելու համար Շարժման համաժողովրդական սկզբնավորումն ու բնույթը: Նախագահ Իլիան Ալիևը

ճգնում է աշխարհին հավատացնել, որ ինքը դեմ չէ, որպեսզի Ղարաբաղում հայերն ապրեն ադրբեջանցիների հետ հավասար իրավունքներով: Ղարաբաղի հայերին, ըստ Ալիևի, մոլորեցրել են ակտիվիստները, որոնք նպատակ են դրել պաշտոններ գրավել և հարստանալ: Սա զրպարտանք է: Մեր Շարժումը ձեռնարկել է ղարաբաղահայությունը: Այն սկսվել է Հաղործից, Մարտունուց, Ասկերանից, Քարին տակից, Սեյսուլանից, գյուղտեխնիկումից, Կոլխոզաշենից, ինստիտուտից, նաև Էրթեջից, Գետաշենից և այլ բնակատեղիներից: Դրանցից յուրաքանչյուրն իրավունք ունի ասելու, թե ինքն է եղել սկզբնավորողը: Ոչ ոք չի կարող ստույգ ասել, թե այդ Շարժման մագարմատները որտեղից են սկիզբ առնում: Դա ազգային ինքնագիտակցության կայացման դիպեկտիկական գործընթացի արդյունք է: Բայց ներկա պարագայում մասնավոր փաստն անժխտելի է՝ 1988թ. փետրվարի 13-ին ինստիտուտի ուսանողները, գուցե ուրիշներից թույլենք շուտ կամ ուշ, դասախոսների հետ միասին, նախօրոք գրված պատահաներով, երթով շարժվել են դեպի հրապարակ: Ի դեպ՝ համալսարանականների շարքերում էին մեր հանրապետության ներկայիս բարձրաստիճան պետական այրեր:

Նշենք, որ աշխարհի բոլոր երկրներում ազատագրական շարժումներին առաջինը ծայանակցում են ուսանողները: Ուրեմն, լավ կլինի, որ հանգիստ թողնեն հուշաքարին:

Շահեն ԱՐԱՎՅԱՍՅԱՆ
ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր

ՇՆՈՐՀԱՎՈՐ ԵՆՈՒՆԴՐ, ՀԱՐԱՋԱՏ ԿՐԹՕՋԱՆ

Առանց հիշողության չկա ապագա, իսկ ներկան կամուրջ է անցյալի և ապագայի միջև: Ներկայիս Իվանյանը իր թևերը փռել է դեպի Նորագյուղ, Հովսեփավան, տանկային զորամաս: Հիանում են նրա նորակառույց շենքերով, օդանավակայանով, հոսպիտալի նոր շենքով և այլ շինություններով: Գյուղի կենտրոնում գտնվում է մեր դպրոցը: Պատմություն, որ իրար է կապում երկար ու ծիգ քսան տարիներ: Իսկ ինչպե՞ս այն սկսվեց...

1993թ. ապրիլի 1: Տարեթիվ, որը հարագատ է յուրաքանչյուր իվանյանցու համար: Ազատագրված հոջալուում բնակություն հաստատեց ազերիների կողմից գրավված Նորագյուղի բնակչության մեծամասնությունը: Դպրոցի կազմակերպման հարցը դարձել էր թիվ 1 խնդիրը:

Մեր լավագույն բարեկամ, բազմավաստակ ուսուցիչ, մեծ հայրենասեր Արմն Սկրտչյանը ձեռնամուխ եղավ տեղի աշակերտների համար դպրոցի ստեղծմանը: Գյուղ վերադառնալը դեռևս անհիմաստ էր: Հարագատ գյուղացիներին միավորել էր պետք, մասնավորապես, դպրոցի աշակերտական և մանկավարժական կոլեկտիվները գտնվում էին Հայաստանի Օշական գյուղում:

Եվ Ա. Սկրտչյանը միավորեց նրանց իր հայրենա-նվեր գործով: Տնօրենը հոջալուի կիսաքանդ հիվանդանոցի առաջին հարկում (ներկայիս զինվորական հոսպիտալի շենքը) հիմնեց դպրոցը և անցավ կադրերի հավաքագրմանը: Առաջիններից մեր ընտանիքն արձագանքեց նրա կոչին: Իմ ծնողները՝ պատմության ուսուցիչ Մառլեն Շահնազարյանը, քիմիայի և կենսաբանության ուսուցչուհի, երջանկալիշատակ Թամարա Սարգսյանը վաղուց իրենց խրամորթի էին զգում: Նրանք

իրենց մանկավարժական գործունեությունը սկսել էին Նորագյուղի միջնակարգ դպրոցում, և Ա. Սկրտչյանը նրանց սիրելի սաներից մեկն էր: Իմ ծնողները վերստին սկսեցին դասավանդել խրամորթիներին՝ այժմ արդեն խոջալուում: Դա 1993թ. ապրիլի 1-ին էր:

Հոգ չէր, որ այդ դպրոցը կիսաքանդ շենք էր, հոգ չէր, որ տրանսպորտ չկար, և նրանք ուտեցվում, պատահական մեքենայով կամ սայլով էին հասնում դպրոց: Ուսուցիչներ գալիս էին քաղաքից, Նորագյուղից, Ասկերանից: Այնուհետև մեզ միացան Նորագյուղի աշակերտական և ուսուցչական կոլեկտիվները: Նրանք վերադարձան Հայաստանից և բնակություն հաստատեցին հոջալուում: Հետո գյուղը վերանվանվեց և դարձավ Իվանյան:

Դասավանդման գործընթացին Ա. Սկրտչյանը մասնակից արեց նաև ինձ: Այդ ժամանակ աշխատում էի Ստեփանակերտի մ. 5 միջնակարգ դպրոցում: Ես մեծ սիրով ընդունեցի իրավերը և պայմանագրային ժամկետով եկա հոջալու իմ ընտանիքով, ընդամենը երեք տարով... Եվ... Եվ ես այստեղ եմ արդեն 20 տարի: Մի ամբողջ կյանք: Ներկայիս 20-ամյա պատանիներն ու աղջիկները, որ ծնվել են խոջալուում, արդեն բնիկ իվանյանցիներ են, և նրանց փոքրիկ հայրենիքը Իվանյանն է, հարագատ կրթօջախը՝ մեր գյուղի դպրոցը: Ներկայումս նրանց երեխաներն են սովորում մեր դպրոցում:

Մեր դպրոցը երկար ճանապարհ է անցել: Հոսպիտալից այն տեղափոխվեց նախկին միլիցայի շենքը. փոշոտ, անշուք սենյակներ, վառարանի ծուխ, բայց ջերմ մթնոլորտ: Ընկեր Սկրտչյանը համախմբեց կոլեկտիվը: Հայաստանից նրանց հետ եկել էին և խրամորթի ուսուցիչները, և՛ աշակերտները: Կրթօջախը կոչ-

վեց Ասկերանի միջնակարգ դպրոց: Խրամորթն ազատագրվելուց հետո տեղահանված բնակչությունը ահով էր դեպի գյուղ նայում: Սպին ճոր էր և ցավ էր պատճառում խրամորթուն: Գյուղին մի Դանկո էր պետք, որ նորից համախմբեր գյուղացիներին: Եվ ընկեր Սկրտչյանը իր անձնական օրինակով համախմբեց գյուղացիներին: Մի ստվեր խմբով մա վերադարձավ գյուղ, նորից հնչեցրեց դպրոցի զանգը՝ ազդարարելով, որ գյուղը կանգուն է իր դպրոցով, իր անուններով:

Եթե նույնիսկ այդ վերադարձը պետական որոշում էր, միևնույն է, որոշումն իրականացնողները հասարակ մարդիկ էին: Լավ մարդուն, իսկական հայրենասերին բարի խոսքեր պետք է ասվեն կենդանության օրոք: Նրան սատարել է պետք կյանքի դժվարին պահերին: Չգիտեմ ինչու, մենք դա մոռանում ենք, և հետո շատ ուշ է լինում սխալը շտկելու համար: Համոզված եմ, որ խրամորթուն կիսաքանդ տներ չեն լինելու, որ այն լցվելու է մանկան ճիչով, որ գեղեցիկ կառուցված տները դատարկ չեն մնալու, և դպրոցը գոյատևելու է:

Իսկ Իվանյանում գործում էր միջնակարգ դպրոցը՝ արդեն պարոն Բալայանի տնօրենությամբ: Այնուհետև նրան փոխարինեց Ռ. Մարտիրոսյանը: Ուսուցչական կոլեկտիվը համալրվում էր նոր կադրերով, աճում էր աշակերտների թիվը: Իվանյանում կառուցվում էին նոր տներ, բնակելի շենքեր: Անշուք դպրոցում մեր սաներն ու ուսուցիչները հասնում էին մեծ հաջողությունների: Դրանք օլիմպիականների, մարզական կյանքի, արտադպրոցական միջոցառումների ոլորտների հաջողություններն էին: Վերջապես տեղափոխվեցինք նոր շենք: Ունենք կաբինետներ, մարզադահլիճ, համակարգչային դասարան: Երկրորդ տարին է՝

գործում է մանկապարտեզի ավագ խումբը: Ափսոս, որ մանկապարտեզի շենք չուներ: Հավատացած եմ, որ Իվանյան համայնքը կունենա մանկապարտեզ, և մեր մանուկները կվայելեն այն ունենալու գերագույն հաճույքը: Իվանյանցին արժանի է մանկապարտեզ և ակունք ունենալու: Դժվարությունները շատ շատ են, ուստի դրանք հաղթահարելու համար մեծ ջանքեր են պահանջվում թե՛ մեզնից և թե՛ վարչական մարմիններից: Տնօրեն Գ. Դուլյանը փոխտնօրեններն Ռ. Գրիգորյանի և Ա. Թովմասյանի հետ միասին ուժ ու եռանդ չի խնայում ուսումնական և արտադպրոցական միջոցառումները բարձր մակարդակի վրա պահելու գործում: Դահլիճի պակասությունը իր բացասական կնիքն է դնում դպրոցական կյանքի իրականացման վրա, քանզի բարձր մակարդակով կազմակերպված միջոցառումները, հանդիպումները, բաց դասերը, դաս-միջոցառումները, ինչու չէ՞, նաև ծնողական ժողովները ստիպված անց ենք կացնում համակարգչային դասարանում, որ ի գորտն չէ տեղավորելու բոլոր ուսուցիչներին, աշակերտներին ու ծնողներին:

Սա ցավոտ հարց է, որ պետք է հուզի թե՛ վարչական մարմիններին ու Ասկերանի շրջանին, թե՛ պատգամավորներին և թե՛ տեղական իշխանություններին:

Իսկ իվանյանցին հույս ունի, որ կգա ժամանակը, և ինքը կունենա դահլիճ, գյուղապետարան, ակունք և մանկապարտեզ:

Հուսանք և ապրենք...

Մարիեթա ՇԱՆԱՀԱՐՅԱՆ
Իվանյանի միջև. դպրոց Կենսաբանության ուսուցչուհի

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՑՉԻՆ

ՀԱՂՈՐԴՅՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆ, ԶՈՒԳԱՆԵՐ ԵՎ ԿԱՄՐՋԱՅԻՆ ՄԻԱՑՈՒՄՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՊԹԱՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՍԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Էլեկտրական շղթաներում դիմադրությունները կարիք է լինում միացնել հաջորդաբար կամ զուգահեռ, իսկ երբեմն նաև՝ խառը կամ կամրջային (ոչ զուգահեռ և ոչ էլ հաջորդական) կերպով:

Հաջորդաբար կոչվում է այն միացումը, որի դեպքում միևնույն հոսանքը հաջորդաբար անցնում է դիմադրություններից յուրաքանչյուրով: Այդ դեպքում ընդհանուր դիմադրությունը՝

R_n = R_1 + R_2 + R_3 + ... + R_n :

Հաղորդիչների միացումը կոչվում է զուգահեռ, եթե նրանց մեկական ծայրերը միացված են մեկ հանգույցում, իսկ մյուս ծայրերը՝ երկրորդ հանգույցում: Այս դեպքում՝


1/R_n = 1/R_1 + 1/R_2 + 1/R_3 + ... + 1/R_n

Քանի որ դիմադրության հակադարձ մեծությունը կոչվում է հաղորդականություն և նշանակվում է k տառով, ապա կունենանք՝ k_n = k_1 + k_2 + k_3 + ... + k_n, այսինքն, զուգահեռ միացման դեպքում անմիջապես գունարկում են հաղորդականությունները, իսկ հաջորդական միացման դեպքում՝ դիմադրությունները:

Մասնավոր դեպքում, զուգահեռ միացված երկու դիմադրությունների համար կունենանք՝

R_{1,2} = R_1 R_2 / (R_1 + R_2)

Հաճախ պատահում են շատ ավելի բարդ շղթայաձևեր (նկ.1), որոնց դիմադրությունը հաշվելու համար անհրաժեշտ է լինում նախօրոք խնդիրը բերել զուգահեռ և հաջորդական միացումների պարզագույն դեպքերին:



Նկ.1.

Նման խնդիրներ լուծելու համար շատ օգտակար է իմանալ, այսպես կոչված, «եռանկյուն» դիմադրությունը «աստղի» փոխարինելու կանոնը:



Նկ.2.

Այդ կանոնի էությունը հետևյալն է: Նկար 2 ա-ում պատկերված է «եռանկյուն» R1, R2 և R3 դիմադրություններ ունեցող կողմերով: Պահանջվում է այդ «եռանկյունը» փոխարինել նկար 2 բ-ում պատկերված «աստղաձև» դիմադրությամբ, որը լրիվ համարժեք լինի «եռանկյանը», այսինքն՝ պահանջվում է գտնել R1,2, R1,3 և R2,3 դիմադրությունները: Եթե «աստղը» համարժեք է «եռանկյանը», ապա նա համարժեք պետք է մնա նաև բոլոր մասնավոր դեպքերում, օրինակ՝ եթե արտաքին շղթայից անջատենք C՝ հանգույցը: Նկար 2-ում ցույց է տրված հոսանքների ուղղությունը այս մասնավոր դեպքի համար: «Եռանկյան» մեջ հոսանքը անցնում է զուգահեռ միացված երկու ճյուղերով, որոնցից մեկի դիմադրությունը՝ R1 է, իսկ մյուսինը՝ R2 + R3: Այդ պատճառով «եռանկյան» դիմադրությունը (3) բանաձևի համաձայն կլինի R1(R2 + R3) / (R1 + R2 + R3): Համարժեք «աստղում» հոսանքը կանցնի հաջորդաբար միացված R1,2 և R1,3 դիմադրություններով, և ընդհանուր դիմադրությունը կլինի R1,2 + R1,3: «Եռանկյան» և «աստղի» համարժեքությունից հետևում է, որ R1,2 + R1,3 = R1(R2 + R3) / (R1 + R2 + R3): Նման ձևով կստանանք նաև երկու այլ հավասարումներ, եթե անջատենք A և B հանգույցները.

R1,2 + R2,3 = R2(R1 + R3) / (R1 + R2 + R3) և R1,3 + R2,3 = R3(R1 + R2) / (R1 + R2 + R3):


Լուծելով վերջին երեք հավասարումների համակարգը՝ R1,2, R1,3 և R2,3 անհայտների նկատմամբ, կստանանք՝ R1,2 = R1 R2 / (R1 + R2 + R3), R1,3 = R1 R3 / (R1 + R2 + R3), R2,3 = R2 R3 / (R1 + R2 + R3):

Վերջին բանաձևերը հիշելու համար կարելի է օգտվել հետևյալ հեշտ հիշվող կանոնից: Համարժեք «աստղի» անեն մի ճյուղի դիմադրությունը հավասար է նրան հարևան երկու դիմադրությունների («եռանկյան») արտադրյալը բաժանած բոլոր դիմադրությունների գումարի վրա:

Նկար 1-ում R1, R2 և R3 դիմադրություններով «եռանկյունին» փոխարինելով «աստղով», կունենանք՝

R1,2 = R1 R2 / (R1 + R2 + R3), R2,3 = R2 R3 / (R1 + R2 + R3) և R1,3 = R1 R3 / (R1 + R2 + R3)

և նկ.1 շղթան կունենա նոր նկ. 3-ի տեսքը.



Նկ.3.

որի դիմադրությունը՝

R = (R2,3 + R1)(R1,3 + R2) / (R2,3 + R4 + R1,3 + R3) + R1,2

Այս բանաձևը, կիրառության իմաստով, գործնական արժեք ունի միայն R1,3, R2,3 և R1,2 միջանկյալ դիմադրությունների որոշումից հետո: Սույն հոդվածում խնդիր է դրված R-ը արտահայտել R1, R2, R3, R4 և R5 դիմադրություններով և այն բերել օգտագործման համար հարմար տեսքի: Նշանակելով R1 + R2 + R3 = x փորձենք աստիճանաբար ձևափոխել (4) բանաձևը:

R = (R2 R3 / (R2,3 + R4 + R1,3 + R3) + R1,2) ...


R-ի վերջին արտահայտության մեջ նորից տեղադրելով x-ի արժեքը և կատարելով անհրաժեշտ խմբավորումներ ու ձևափոխումներ, կստանանք՝

R = R2(R1 + R2)(R2 + R4) + R1 R2(R2 + R4) + R2 R3(R1 + R2) / (R2(R1 + R2 + R3 + R4) + (R1 + R2)(R3 + R4))

Այժմ փորձենք որոշել R արտահայտության տեսքը հետևյալ մասնավոր դեպքերում՝

ա) Եթե R3 -> infinity, ապա R = (R1 + R2)(R2 + R4) / (R1 + R2 + R3 + R4) (6): Իրոք, եթե R3 -> infinity, ապա

նշանակում է նրանով հոսանք չի անցնում և այն կարելի է շղթայից (նկ.1) անջատել, որի հետևանքով նկ.1-ի փոխարեն կունենանք նկ.4-ը:



Նկ.4.

Նկար 4 շղթայի դիմադրությունը համընկնում է (6) արտահայտության հետ:

բ) Եթե R5 -> 0, ապա R-ի (5)-րդ արտահայտությունը կվերածվի R = R1 R2 (R1 + R4) + R1 R4 (R1 + R2) / (R1 + R2)(R1 + R4) (7) արտահայտության: Իրոք, R5 -> 0 նշանակում է կարելի է նկ.1-ի C և D կետերը միացնել: Արդյունքում կունենանք հետևյալ շղթան.



նկ.5

Այս շղթայի դիմադրությունը կլինի R1 R2 / (R1 + R2) + R2 R4 / (R3 + R4), որը համընկնում է R-ի (7)-րդ արտահայտության հետ:

գ) Ընդունենք R2 = R3, կամ R1 + R2 = R2 + R3, կամ R1 + R2 = R2 + R3: Այժմ փորձենք ձևափոխել R-ի 5-րդ արտահայտությունը վերջին պայմանի դեպքում:

R = R1(R1 + R3)(R2 + R4) + R1 R2(R1 + R4) + R2 R3(R1 + R2) / (R1(R1 + R2 + R3 + R4) + (R1 + R2)(R3 + R4)) = (R1 + R2)(R2 + R4) / (R1 + R2 + R3 + R4)

Քանի որ գ) պայմանի դեպքում R1 R2 (R2 + R4) + R2 R3 (R1 + R2) = (R1 + R2)(R2 + R4), Իրոք, հաշվի առնելով, որ գ) պայմանից R1 + R2 = R2(R1 + R4) / R4, կստանանք՝

R1 R2 (R2 + R4) + R2 R3 (R1 + R2) / R4 = R2 (R2 + R4)(R1 + R4) / R4

R2 (R1 + R3) / (R1 + R2 + R3 + R4) = R2 (R2 + R4) / (R2 (R1 + R4) + R3 (R1 + R2)) կամ 1 / (R1 + R2 + R3 + R4) = R2 + R4 / (R2 (R1 + R4) + R3 (R1 + R2)) =>

R1 R4 + R2 R4 + R3 R4 + R4^2 - R2 R1 - R3 R1 - R3 R2 + R4^2 => R1 R4 - R2 R1,

որը և բխում է գ) պայմանից:

Այսպիսով՝ գ) պայմանի դեպքում R = (R1 + R2)(R2 + R4) / (R1 + R2 + R3 + R4) + R2 R3 (R1 + R2) / (R2 (R1 + R4) + R3 (R1 + R2)) (8)

արտահայտության արժեքը կախված չէ R5-ից և ճիշտ է նրա ցանկացած արժեքների դեպքում:

R-ի 8-րդ արտահայտության կախված չլինելը R5-ից բոլորովին էլ պատահական չէ: Իրոք, եթե նկ.4-ում ADB ճյուղի հոսանքը նշանակենք I1-ով, իսկ ACB ճյուղինը՝ I2, ապա կարելի է գրել, որ I1 / I2 = R2 + R4 / R1 + R3 = R2 / R3 = R2 / R1 գ) պայմանի համաձայն:

Վերջին արտահայտությունից I1 R1 = I2 R3 և I1 R3 = I2 R1: I1 R1-ը և I2 R3-ը լարման անկումներն են համապատասխանաբար AD և AC տեղամասերում կամ R1 և R2 դիմադրությունների վրա, որից հետևում է, որ C և D կետերն ունեն միևնույն պոտենցիալները, կամ այդ կետերի պոտենցիալների տարբերությունը հավասար է 0-ի: Վերջինս նշանակում է, որ R5-ով հոսանք չի անցնի նրա ցանկացած արժեքի դեպքում և այն եղած կամ չեղած՝ միևնույնն է ուսումնասիրվող նկ.1 շղթայի համար: գ) պայմանի դեպքում է, որ նկ.1-ում պատկերված շղթան վերածվում է նկ.4-ում կամ նկ.5-ում պատկերված շղթաների, որոնց դիմադրությունները որոշվում են R-ի (8) արտահայտությամբ:

Այժմ փորձենք R = R2(R1 + R2)(R2 + R4) + R1 R2(R2 + R4) + R2 R3(R1 + R2) / (R2(R1 + R2 + R3 + R4) + (R1 + R2)(R3 + R4)) բանաձևը

ուսումնասիրել նրա՝ ըստ R5-ի ածանցյալի միջոցով և հաշվի առնելով նրա երկարաշունչ լինելը՝ արդյունքը ներկայացնենք առանց միջանկյալ հաշվարկումների.

dR/dR5 = R' = (R1 R2 - R2 R3)^2 / [(R2(R1 + R2 + R3 + R4) + (R1 + R2)(R3 + R4))^2] (9)

Ինչպես երևում է 9-րդ արտահայտությունից, եթե R1 R2 - R2 R3 != 0, ապա R' > 0 և R-ը աճող ֆունկցիա է՝ կախված R5-ից: R5 -> 0 դեպքում

R_max = R1 R2 (R2 + R4) + R2 R3 (R1 + R2) / (R1 + R2)(R3 + R4), իսկ եթե R5 -> infinity, ապա R_infinity = (R1 + R2)(R2 + R4) / (R1 + R2 + R3 + R4)

R1 R4, R2 R3 = 0 դեպքում R' = 0, R5-ը կունենա R5 = 0 տեսքը, որը նշանակում է, որ այն կարող է ընդունել ցանկացած արժեքը, իսկ R-ը կախված չէ R5-ից, ունի հաստատուն արժեք և հավասար է նրա մեծագույն կամ փոքրագույն արժեքներին, որոնց իրար հավասար են, ինչպես այդ տեղի ունեցող գ) պայմանի ընթացքում:

Այսպիսով՝ նկ.1 շղթայի դեպքում պետք է հիշել, որ՝

- 1) շղթայի դիմադրությունը R5-ի աճին զուգընթաց աճում է.
2) R1 R4, R2 R3 = 0 կամ R1 = R3 պայմանի դեպքում, շղթայի դիմադրությունը կախված չէ R5-ից:
3) կամրջակային միացման շղթայի (նկ.1) բանաձևը կարելի է հիշել նրա մասնավոր (R5 -> infinity և R5 -> 0) դեպքերին վերաբերող 6-րդ և 7-րդ բանաձևերի համակցման միջոցով:
4) 5-րդ բանաձևը հարմար է նրանով, որ նկ. 1 շղթայի R դիմադրությունը միանգամից որոշվում է տրված R1, R2, R3, R4 և R5 դիմադրությունների միջոցով և առանց միջանկյալ արժեքների հաշվարկման:

ՍԱՆԿԱՊԱՐՏԵՁ

ՄԵՐ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ՓԻՏԱԿՅՈՒՄ ԵՆ ԽԱՂԱՂ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ ԱՊՐԵՆՈՒ ԱՐԺԵՐԸ



Յուրաքանչյուր մարդ-անհատի կյանքում անընդելի, անմոռաց հետք է թողնում իր ուսումնական առաջին դարբնոցը՝ մանկապարտեզը: Մանկության գեղեցիկ օրրան, ուր մենք սովորել ենք մորը, հայրենիքին, ուսուցչուհուն նվիրված գեղեցիկ ոտանավորներ, հասցրել ենք հասկանալ ու ընկալել մեր ես-ը, գիտակցել, որ երկրի վաղվա տերն ու քաղաքացին մենք ենք: Հրաշքներով լի մոլորակ, ուր մշտապես թևածում և վառ արտաջղվում են մանկական անհոգ ժպիտները, անկեղծ զգացմունքները, հույզերն ու ապրումները: Յուրաքանչյուր մանկապարտեզ ունի իր կենսագրությունը:

Մարտունու հ. 2 մանկապարտեզը, որը կրում է լեգենդար գործարար Գրիգորյան-Մատթեոսյանի անունը, գործում է 1988 թվականից: Պատեռզանական տարիներին՝ 1991-1992թթ. այն ծառայել է որպես գինվորական հոսպիտալ: 2010-2011թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի և առանձին հովանավորների միջոցներով այստեղ մասնակի նորոգումներ են կատարվել, կահավորման աշխատանքներ տարվել, բայց շենքը հիմնամուրոզման կարիք ունի: Մանկապարտեզում գործում է 8 խումբ՝ 195 երեխաների ընդգրկմամբ:

2012թ. կատարված աշխատանքների և այլ հարցերի շուրջ էր մեր հարցազրույցը մանկապարտեզի տնօրեն Իրինա ՂՈՒԿԱՍՅԱՆԻ հետ:

- Տիկին Դուկասյան, սույն թվականի մարտի 30-ին լրացավ Ձեր պաշտոնավարման մեկ տարին: Ի՞նչ աշխատանքներ են կատարվել, դրական ի՞նչ տեղաշարժեր են արձանագրվել մանկապարտեզում այդ ժամանակաշրջանում:

- Այսպիսի մի արտահայտություն կա՝ մանկապարտեզը մեր տունն է, ուստի ինչպես տանը, մանկապարտեզին ևս խնամք ու հոգատարություն է անհրաժեշտ: Ընդհանուր առմամբ, տան բակի մաքրությամբ ու գեղեցկությամբ է պայմանավորված նրա ներքը: Երբ մենք հյուրընկալվում ենք մեկի տանը, արդեն իսկ բակից պատկերացում ենք կազմում ներսի մասին: Ելնելով այս պարզ ճշմարտությունից՝ իմ գործունեության մեկնակետը եղան երեխաների ակտիվ ժամանցի ապահովման գործում կարևոր նշանակություն ունեցող խաղահրապարակի բարելավումն ու կանաչապատման աշխատանքները: Վերանորոգվել են մանկապարտեզի մուտքային մասի տանիքն ու աստիճանները, խաղատնակների և հովանոցների տանիքները: Ընթացքի մեջ են ճոճամակների վերանորոգման աշխատանքները: Մեծ ուշադրություն է

դարձվում խաղահրապարակի արտաքին տեսքի բարելավմանը: Սովորական առարկաներից՝ մեքենայի անվադողերից պատրաստվել են վարդեր, կարապներ և գորտուկ արքայադուստր, որոնք տեղադրվել են մանկապարտեզի մուտքային մասերում: Եղանակին համահունչ աճեցվել են ծառիկներ: Այսբանը՝ խաղահրապարակի մասին:

Մանկապարտեզի հովանավորների ֆինանսական աջակցությամբ բեռոնապատվել է առաջին խմբի խմբասենյակի մուտքային մասը, ծածկվել լինոլեումով: Նոր գորգեր են ձեռք բերվել խմբասենյակների համար: Խոհանոցում տեղադրվել են օդափոխիչ համակարգեր, համալրվել անհրաժեշտ պարագաներով, ապահովվել տաք ջրով:

Որպես Ամանորի նվեր՝ այս տարի մանկապարտեզն ունեցավ մեծ, գեղեցիկ տոնածառ՝ իր բազմապիսի զարդարանքներով ու խաղալիքներով: Բացի այդ, երաժշտական դահլիճի համար ձեռք բերվեց զագոջախ:

Մեր մանկապարտեզն այն եզակի մախադարոցական հաստատություններից է, որտեղ կա զոհված ազատամարտիկների հիշատակը

հավերժացնող անկյուն, որը, ցավոք, գտնվում էր ոչ բարվոք վիճակում: Լրիվությամբ հեռացվել ու նոր հուշատախտակ է տեղադրվել՝ ազատամարտիկների նկարներով:

Մանկապարտեզում հիշարժան տոն օրերին ու հոբելյաններին նվիրված՝ պարբերաբար կազմակերպվում են բազմաբնույթ միջոցառումներ, որոնց մասնակցում են նաև ծնողներ և հյուրեր: Նրանք մշտապես նվիրատվություններ են կատարում մանկապարտեզին: 2012թ. հունիսի 1-ին, Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված, ԼՂՀ ՊՇ 3-րդ զորամասի հրամանատար Կարեն Առստամյանն օրվա առթիվ շնորհավորեց երեխաներին՝ մանկապարտեզին նվիրելով մեծ փափուկ խաղալիքներ: Հունիսի 1-ի առթիվ բազմաթիվ տարբեր խաղալիքների նվիրատվություններ է կատարել Մարտունու «Հոգևոր վերածնունդ» հասարակական կազմակերպության նախագահ Եսայ Բալայանը:

Երեխաների պաշտպանության օրվան նվիրված «Ցտեսություն, մանկապարտեզ» միջոցառումների ժամանակ իրենց նվիրատվություններով փոքրիկներին շնորհավորեցին Մարտունի քաղաքի «Կարեն» և «Յանա-Դիանա» ՄՊՇ-ների սեփականատերեր Հենրիխ Բարսեղյանն ու Վիտալի Չալսյանը:

Առողջապահական նորմերին համապատասխան՝ սանիտարահիգիենիկ վիճակը բարվոք պահելու համար անհրաժեշտ է երեք տարին մեկ փոխել սպիտակեղենը, հինգ տարին մեկ՝ ներքնակները, բարձրն ու վերնակները: Պետական ֆինանսավորմամբ մասնակիորեն փոխվել է սպիտակեղենը: Գործընթացը կշարունակվի և ավարտին կհասցվի պետության առաջին իսկ օժանդակության դեպքում:

- Ի՞նչ դժվարությունների հանդիպեցիք Ձեր գործունեության սկզբնական շրջանում:

- Ցանկացած գործ ձգտում ու նվիրում է պահանջում: Ունի իր խնդիրներն ու դժվարությունները, որոնք լուծվում են այդ ձգտման ու նվիրումի շնորհիվ: Սկզբնական շրջանում կային որոշակի դժվարություններ, որոնք կարճ ժամանակում հաջողվեց հաղթահարել կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ:

- Ի՞նչ խնդիրներ ունի մանկապարտեզը: Որքանով է հաջողվում լուծում տալ դրանց:

- Առաջին հայացքից թվում է՝ մանկապարտեզը խնդիրներ չունի, քանի որ հովանավորների միջոցով ու սեփական ուժերով աշխատում ենք պարբերաբար թարմություն մտցնել մեր կենցաղում: Ուսումնադաստիարակչական աշխատանք-

ների հետ կապված՝ այստեղ խնդիրներ չկան: Դրանք բավարար հիմքերի վրա են: Պարապմունքների ժամանակ երեխաների մեջ ի հայտ են գալիս ճանաչողական կարողություններ բնության, իրականության, հասարակական կյանքի իրադարձությունների նկատմամբ, որով էլ ձևավորվում են ապագա դարոցակալի ինքնագիտակցության հիմունքները: Այստեղ կարևորվում է նաև երեխայի խոսքի, լեզվամտածողության, գրաճանաչության զարգացումը: Թերևս, նկատած կլինեք, որ այս ոլորտում շենքի ամեն մի անկյունում Սոնթեք է՝ իր կենդանի ներկայությամբ ու հուշերով: Սա նշանակում է, որ այս պատերի ներսում մեծանում ու դաստիարակվում է մի սերունդ, որը սնվում է Սոնթեքի նվիրական զաղափարներով: Երեխաներն իրենց համարում են մոնթեականներ: Նրանք դեռ այս տարիքից գիտակցում են խաղաղ երկնքի տակ ապրելու արժեքը և երգում են «Մենք Սոնթեքի թոռներն ենք», «Կանգուն մնաս, Ղարաբաղ» երգերը: Նրանք արյունով, ավյունով ու երթյամբ, իրոք, հայ են դաստիարակվում: Մանկապարտեզն այն առաջին հիմնական օղակն է, որտեղ սկզբնապես ձևավորվում ու դաստիարակվում է հայրենիքի ապագա պաշտպանը: Պատահական չէ, որ այստեղ լուրջ ուշադրություն է դարձվում նաև ֆիզդաստիարակությանը:

Ընդհանուր առմամբ, ուսումնամեթոդական գրականությամբ ու անհրաժեշտ պարագաներով հաստատությունը ապահովված է: ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից հաճախակի ենք ստանում մեթոդական գրականություն, որով էլ մեծ սիրով առաջնորդվում են մեր դաստիարակները: Առկա են նաև դիտողական պարագաներն ու բազմապիսի խաղալիքներ: Մանկապարտեզում իրականացվող բոլոր աշխատանքներն ուղղված են երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացմանը: Այնուամենայնիվ, կան հարցեր, որոնց լուծումը մեր ուժերից վեր է: Խոսքս մանկապարտեզի շենքային պայմանների և կոյուղու անմխիթար վիճակի մասին է: Վերջինիս պատճառով առողջապահական և սանիտարահիգիենիկ որոշ խնդիրներ են առաջանում: Մենք չենք կորցնում այն հույսը, թե մի օր մեր մանկապարտեզը կընդգրկվի հիմնանորոգման ծրագրում: Քանի որ ԼՂՀ կառավարությունը ցանկացած հարցում հնարավորինս աջակցում է մեզ, ուստի հավատացած ենք, որ խնդիրն այս տարի իր լուծումը կստանա:

- Մանկապարտեզը համալրված է անհրաժեշտ մասնագետներ-

րով:
- Ունենք 47 աշխատող, որից 23-ը դաստիարակներն են՝ բարձրագույն կրթությամբ մասնագետներ: Մանկապարտեզի լավագույն, նվիրյալ դաստիարակները և մեթոդիստ Իրինա Ուլուբաբյանն աշխատում են ջանասիրությամբ՝ հաստատելով, որ կրթությունն է ամուր պետության հիմնաքարը: Ի. Ուլուբաբյանը տարիներ շարունակ մեծ սիրով է կատարել իր հայրենամկեր առաքելությունը՝ յուրովի սիրելով ու հարգատանալով մանկապարտեզի սանթրի հետ:

- Անհերքելի է, որ առողջապահական համակարգում կարևոր տեղ է գրավում սննդակարգը: Ի՞նչ կատեխիզերեխաներին տրվող օրական ճաշացանկի մասին:

- Փոքրիկներին տրվում է բազմապիսի և էկոլոգիապես մաքուր սնունդ, ապահովվում է որակն ու թարմությունը: Յուրաքանչյուր երեխայի օրական հասնում է 566 դրամի սնունդ, որը պարունակում է նրան անհրաժեշտ, պահանջվող նորմերին համապատասխան կալորիականություն:

- Ո՞րն է աշխատելու Ձեր բանաձևը:

- Լինել միշտ ստեղծագործող և աշխատել խանդավառությամբ, որովհետև աշխարհն առաջ հրող լծակը խանդավառությունն է: Ասեմ, որ աշխատածամին առաջնահերթությունը տալիս են կարգապահությունը և ճիշտ, բնականոն ռեժիմի պահպանմանը: Արդյունավետության հասնելու համար գերադասում են նպատակասլաց ու հետևողական աշխատանքը:

- Ձեր բարենախառնը կանանց ո՞ւր աղջիկների, մայրության և գեղեցկության միասնակի առթիվ:

- Ձերմորեն շնորհավորում են գեղեցիկ սեռի բոլոր ներկայացուցիչներին զարմանալի այս չքնաղ տոների կապակցությամբ: Մեր Արցախի կանանց, մայրերին ու աղջիկներին մաղթում են ամուր ընտանիք, սեր, հարգանք, հոգատարություն, ջերմ խոսքեր ու ժպիտներ: Եղբ միշտ գեղեցիկ, սիրված ու գնահատված: Առողջություն և հաջողություն ձեր և ձեր մտերիմների ընտանիքներին:

Մեր հերթին շնորհավորում ենք Իրինա Դուկասյանին և նրա գլխավորած կոլեկտիվին կանանց տոնի կապակցությամբ, ցանկանում նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ:

Արմինե ՂԱՆԻՆՅԱՆ


Հայրենագիտական

ՈՎ ԶԻ ԽԱՆՈՒՄ ՈՒ ՓՆԱՀԱՏՈՒՄ ԻՐ ԱՆՑՅԱԼԸ, ԶԻ ՈՒՆԵՆԱ ՀՈՒՍԱԿ ԱՊԱԳԱ

Ֆիդայի... Նվիրական ու սրբաբույր անուն ամբողջ հայության համար, անուն, որ խորիրդանիչն է հայ ընթրստ ոգու:

Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ. 8 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտները դասդեղ Զ. Գասպարյանի և պատմության ուսուցիչներ Լ. Մարտիրոսյանի, Գ. Պողոսյանի ղեկավարությամբ զարմանալի արձակուրդի առաջին օրը կազմակերպեցին էքսկուրսիա Ասկերանի շրջանի Ծաղկաշատ գյուղում գտնվող անվանի հայդուկապետ Նիկոլ Դումանի տուն-թանգարան: Երեխաների տպավորություններն անչափ վառ ու գունեղ էին: Նրանք շատ տեղեկություններ իմացան ազգային-ազատագրական շարժման գործիչ, հայտնի ֆիդայի, մեր համերկրացի Նիկոլայոս Տեր-Յովհաննիսյանի կյանքի,

գործունեության, անցած փառավոր մարտական ուղու մասին: Երեխաները տեսան և նույնիսկ շոշափեցին նրա գեղեցիկ-զինամթերքը, հագուստը, քարտեզները, որոնցով նա առաջնորդվել է մարտի դաշտում, ճանաչեցին մեծ հայդուկապետին, տեսան այն տունը, որտեղ ծնվել, մեծացել և դաստիարակ-



վել է ազգային մեծ գործիչը: Նրանց վրա մեծ տպավորություն թողեց տան կահավորումը՝ ազգային ավանդական կահ-կարասին, կարպետները, այգում կախված խնոցին, նկուղում տեղադրված ճախարակը, բուրդ զգելու սանրը (սանդերք), կրակ թեժացնելու փուքսը, տրեխները, տանը կից թոնրատունը, մառանը և տարբեր աշխատանքային ու կենցաղային իրեր, որոնց մասին նրանք գիտեին միայն զրբերից: Թանգարանի յուրաքանչյուր անկյունից զգացվում էր հայկական ավանդական շունչն ու ոգին: Այնուհետև տուն-թանգարանի բակում կազմակերպեցին բաց դաս՝ նվիրված Նիկոլ Դումանին: Դասը Միեր Գասպարյանը սկսեց ֆիդայական երդման խոսքով:

ԴԻՄԱՆԿԱՐ

«ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ ԱՏԵԼ ԵՄ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ...»



Զաիրա Միրզայան: Բնիկ ստեփանակերտցի, ինչն ինքնին ենթադրում է տեսակ՝ ուրույն մտածելակերպով ու կենսափոխակերպությամբ, ով արդեն քանի տարի ընտրել է վերաբնակի կարգավիճակը, քանզի կյանքի անկարծ մի ոլորանում վրա հասավ այն պահը, երբ, իր իսկ խոստովանությամբ, դարձավ «օտար՝ յուրայինների մեջ»: Իսկ նա հեշտությամբ հանձնվողներից չէ. հանկարծամահ եղած ամուսնուց հետո երկու զավակների հանդեպ պատասխանատվության զգացումը ուժ ներարկեց թաթափ մորը ու շուկեց նրա կորագած մեջքը, և նա՝ առաջատուները պարզած նավի նման, նորից նետվեց կյանքի հորձանքին ընդառաջ: Մանկավարժ է՝ ռուսաց լեզվի և գրականության ուսուցչուհի. մի քիչ բանաստեղծ՝ երբ հոգու պարունակը հանգ ու ռիթմ է առնում, մի քիչ լրագրող՝ երբ գրիչը վերձանում է ցավի ու անարդարության հասցեն՝ շարքային քաղաքացու դառնությունն ու անկախիքները միախառնելով հայրենի երկրի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ մարտնչող լավատեսությամբ:
Չայրը քաղաքում բարի համբավ վայելող, պատերազմի և աշխատանքի վետերան, ԽՍՀՄ ժուռնալիստների միության անդամ երվանդ Միրզայանն է: Բոլոր հայրերի նման նա էլ տղա զավակի մասին էր երագում, և երբ ծնվեց չորրորդ դուստրը՝ Զաիրան, ծննդատան բակում սպասող հոր հուսախաբ հարցին՝ էլի՞ աղջիկ, կինը հուճորով պատասխանեց. «Եթե կարող ես տղա բերել, արի ինքը բեր»: Զաիրան հիշում է, որ ծնողները հուճորով ու կատակասեր մարդիկ էին, և ընտանիքում միշտ ջերմ ու համերաշխ մթնոլորտ էր տիրում: Նախկին զինվորական

հայրը տան մեջ էլ զինվորական կարգուկանոն էր հաստատել. պատից կախված էր աղջիկների հերթապահության ցուցակը, և հայրն ամեն օր զննահատական էր նշանակում տան մաքրության, գրադարակներում գրքերի ու տետրերի խնամքով դասավորվածության համար: Ընտանիքի ամենամեծ հարստությունը երեխաներից հետո գրադարանն էր, որն օր օրի, տարիներ շարունակ մի առանձին նախանձախնդրությամբ հավաքել էր հայրը և հոգացել, որ աղջիկները մանկուց կապվեն գրքերի կախարդական աշխարհին՝ նրանց մեջ սերմանելով սեր գիտության հանդեպ, ազնվություն ու ճշմարտախոսություն:
Ընտանիքում պարտադիր նշվում էին Ամանորից մինչև Նոյեմբերի 7-ն ընկած բոլոր տոները: Զաիրան կարոտով է հիշում այդ տարիները. հայրը շատ հյուրասեր էր, և բոլոր տոներին երկու կողմի ազգականների հավաքատեղին դառնում էր իրենց տունը: Իսկ ամենասիրելի և սպասված տոնը եղել է մնում է Մայիսի 9-ը՝ «տարվա ամենաարևոտ, ամենացնձազին օրը, երբ ինքը քո աչքին ավելի բարձրահասակ ես թվում, երբ դեմքիդ փայլող ժպիտից աչքերիդ ցուլքն է ավելանում, նույնիսկ զոհվածներին սգալու պահերին»: Ընտանեկան խնջույքների անբաժան ուղեկցին էլ հոր սիրած «Չաղթանակի օրը» երգն էր, որը երգում էին մեծով ու փոքրով: Վերջին անգամ 2006-ին երգեցին հոր համար. դա նրա վերջին զարուհն էր, վերջին տոնը: Չիմա, երբ հայրը չկա, ամենավառ հուշերը դարձյալ այդ օրվան են առնչվում, քանի որ Շուշիի գրավումից հետո այն կրկնակի թանկ ու հարգատ էր դարձել: «Մահճակալը դատարկ է, դու մեզ հետ չես: Ցավալի է: Բայց, ներիր, հայր, ես դարձյալ ուրախությամբ և անհամբերությամբ սպասում եմ Չաղթանակի օրվան: Ես խոստանում եմ, հայր, որ կպահպանեմ հին, բարի ավանդույթները»,- կարդում ենք Զաիրայի «Անպատասխան երկխոսություն» թղթակցությունում:
Ավարտել է Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցը: Երբեք չի մոռանում և հպարտությամբ է հիշում սիրելի ուսուցիչներին, որոնցից յուրաքանչյուրի հետ կապված անմոռ

անալի հուշեր ունի. «Յուրովի այցեքարտ էր մեր դպրոցի շրջանավարտ, ասել է թե՛ գրիբոյեդովական լինելը. մենք սիրում էինք մեր դպրոցը. մենք նրա մի մասնիկն էինք: Միշտ ասում եմ, որ մեր դպրոցն ինձ ավելի շատ գիտելիք է տվել, քան որևէ բուհ»:
Աշխատանքային ուղուց կարևորում է այն հատվածը, երբ աշխատում էր քաղաքի հ.1 մուլտ-մանկապարտեզում: Շատ շուտ կապվեց երեխաների հետ, սիրեց նրանց պարզությունն ու անմիջականությունը: Մինչև այսօր էլ մեկ առ մեկ հիշում է իր սաներին: Անցած տարիների հուշը ապրում է նրա մեջ, ինչպես ներկայում: Չիշում է այդ մանկանց դեմքերը, նրանց ելույթները, վարքն ու պահվածքը զբոսանքների ժամանակ, նրանց վերաբերմունքը միմյանց հանդեպ, նույնիսկ հիշում է, թե ինչ շորեր էին հագնում: Մի՞թե հնարավոր է մոռանալ փոքրիկ Ադամյան Արմենին, ով սիրում էր բռնել դաստիարակչուհու ձեռքից և այդպես մնալ, իսկ եթե մինչև նրա գալը մեկ ուրիշն էր դաստիարակչուհու ձեռքից բռնում, գալիս, գլուխը կախ կանգնում էր կողքին և աչքի ծայրով այնպես խեթ ու սևեռում նայում իր «հակառակորդին», որ նա ստիպված էր լինում տեղը զիջել «սիրույթ»: Չիմա չկա Արմենը. շատերի նման նրա կյանքն էլ խլեց պատերազմը... Իրեն տանջող հոգեկան ցավն ու մորմոքը Զաիրան թղթին հանձնեց՝ նրանց մասին գրելով հանրապետական թերթերում. «Մինչ օրս զգում եմ նրա ձեռքի ջերմությունը: Ախ, մի հնար լիներ այդ ողբերգական օրը նրան մեկնել իմ ձեռքը, որին նա այնպես սովոր էր մանկուց. առանց հապաղելու հետ կքաշել նրան այդ մահվան մեքենայից»... Արմենավանից Ռաֆիկին է հիշում, Ղահրամանյան Դավթին, շատ-շատերին՝ միանգամից մեծացած ու Արցախյան պատերազմով անցած իր սաներին, ովքեր հավերժ երիտասարդ մնացին նրա հիշողության մեջ:
«Ամբողջ կյանքում ատել եմ անտարբերությունը. սուսիկ-փուսիկներն իմ ճաշակով չեն»,- ասում է ուսուցչուհին: Քաղաքացիական ակտիվ կենսագիրքով աչքի էր ընկնում դեռ պատանեկության տարիներից: Իսկ երբ սկսվեց Արցախյան շարժու-

մը, նրա ըմբոստ ոգին չհամակերպվեց այն հերյուրամբների ու կեղծիքի հետ, որոնցով Մոսկվան ու կենտրոնական լրատվամիջոցները մոլորության մեջ էին զգեց բազմազգ Միության ժողովուրդներին: 1988-ի հուլիսին «Իզվեստիա» թերթում հրատարակված Ա. Քյազիխանովի և Ա. Սաբիրովի՝ դարաբաղյան թեմայով հոդվածներին և «Պրավդայի» հատուկ թղթակից Օվչարենկոյի «Չուլգեր և բանականություն» տխրահեշակ գրապարտազգրին ի պատասխան, նա բողոքի նամակներ էր հղում խմբագրություններին և դատապարտում նրանց կեցվածքը, ովքեր հարցի էության մեջ խորանալու փոխարեն զոհին ու դահճին նույն հարթության վրա էին դնում:
Ամուսնու աշխատանքի բերումով ընտանիքը տեղափոխվեց Արթիկ, որը նրա համար դարձավ երկրորդ հայրենիք: 1999-ին, ամուսնուն կորցնելուց հետո, վերցրեց երեխաներին և վերադարձավ Արցախ: Բայց հայրենի քաղաքում նրա համար աշխատանք չգտնվեց: Շուտով աշխատանքի անցավ Չարավի միջնակարգ դպրոցում, իսկ երբ իմացավ, որ վերաբնակեցվող Շահունյանի շրջանի գյուղերում մասնագետի կարիք կա, տեղափոխվեց Նոր Վերինը: Նա պատրաստ էր ցանկացած աշխատանքի, միայն թե կարողանար ոտքի կանգնեցնել երկու զավակին: Շատ դժվարությամբ հարմարվեց գյուղական կենցաղին, հիմա նա իր ձեռքերով միզ ու բանջարեղեն է աճեցնում և քաղաքացիական երեխաներին ապահովում թարմ ու բնական մթերքներով: Չասցրել է կապվել նաև այս գյուղին, նրա բնակիչներին ու մանկավարժական կոլեկտիվին: Վերջինիս մասին դրվատանքով է խոսում, քանի որ յուրաքանչյուր ուսուցիչ պատասխանատվությամբ է մոտենում իր գործին: Իսկական մանկավարժը, ըստ նրա, պետք է գերազանց տիրապետի իր դասավանդած առարկային, ունենա բազմակողմանի գիտելիքներ և անպայման հոգեբան լինի: Դպրոցն ունի 58 աշակերտ, և ուսուցչուհին գոհ է նրանցից, որովհետև ուսման հանդեպ սեր ու ձգտում կա նրանց մեջ: Նոր Վերինը շատ էր երիտասարդ ընտանիքներ շատ կան, իսկ ամենաուրախալին այն է, որ բազմազավակներն էլ

շատ են: Դպրոցի տնօրենը 13 երեխա ունի և իր օրինակով խրախուսում է համապարտադրվածներին:
Շատ քչերին է կյանքը երես տալիս. մեծավ մասամբ մեզնից յուրաքանչյուրն ինքն է կրում իր խաչը՝ տրտնջալով կամ անտրտունջ: Միշտ հարգանքով են վերաբերվում անանձնական տրտունջներին, երբ մտահոգությունը երկրի ու ժողովրդի վաղվա հանդեպ բարձր պատասխանատվությունից է ծնվում: Մեր շուրջը դեռ շատ անարդարություններ կան, դեռ չենք կարողանում արժանի հատուցել Արցախյան պատերազմի զոհերին, հաշմանդաններին ու նրանց ընտանիքներին, անհանգստության առիթ են օրավուր աճող հասարակության բևեռացումը՝ աղքատների և հարուստների, ցածր կենսամակարդակը, աշխատատեղերի բացակայությունը, հոգևոր և բարոյական արժեքների կորուստը և էլի շատ ու շատ չլուծված խնդիրներ: Եվ այս ամենի հետ չհաշտվող ակնարկիս հերոսուհու հիասթափությունն ու դառնությունը նաև իմն է դառնում. «Եթե պատերազմ տեսած մարդիկ կորցնում են իրենց խիղճը, ես չեմ կարող հասկանալ նրանց: Չեմ կարող հասկանալ այն պաշտոնյաներին, ովքեր, պաշտոնը գրառ դարձնելով, իրենց անխոցելի են համարում և մտածում են միայն սեփական կարիքների մասին՝ մոռանալով մեծերից մեկի խոսքը, որ այսօրվա պաշտոնյան նախասահմանված պաշտոնագրովն է վաղվա: Թվում է՝ պատերազմ, սով ու զրկանքներ տեսած մարդիկ այնտեղ որ ավելի մաքրագործված ու կարեկցանքով լցված լինեին միմյանց հանդեպ, բայց զարմանում եմ՝ տեսնելով նրանց անտարբերությունն ու հանդուրժողականությունը շրջապատի բացասական երևույթների հանդեպ»:
7.9. կամ վերջին ուրվագիծ դիմակարի ամբողջացման համար. երբ մտովի անդրադարձա մեր գրույցին, մի տխուր օրինակափոխություն հայտնաբերեցի՝ ուրախության, երջանկության և ընդհանրապես ամեն լավ բաների մասին խոսելիս բայերը միայն անցյալ ժամանակ ունեն...

ՄԵԼԱՆՅԱ ՄԻՆՈՆՅԱՆ

ՄԱՅՐ, ԴՈՒ ՀԱՄԱԿ ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Աստծո գործունեից հետո մոր գործունեությունը ամենամեծ ուժն է երկրի վրա:
Մայր, դու համակ աստվածություն... Ասում են, երբ Աստված իր արարչագործությունից հետո տեսավ, որ չի կարողանում հսկել երկիրը, ստեղծեց մորը...
Չիրավի, ինչպիսին կլիներ աշխարհն առանց մոր... Ինչպիսին կլիներ մեր կյանքը առանց նրա բարի հայացքի, խոսքի... Ինչքան զեղեցիկ են մոր աչքերը, և հանուն նրա արժեք ծնվել, աշխարհ գալ...
Մոր համար ամենամեծ երջանկությունը իր զավակի երջանկությունն է, և հանուն այդ մեծ երջանկության ինչերի՞ չի պատրաստ նա... Մայրը կարող է իր սիրելի զավակների վրա առատորեն թանկագին լույս և ուրախություն թափել: Նա կարող է այնքան ուժեղ ձգել երեխաների սրտերը դեպի իրեն, որ իր հետ շփումը

նրանց համար ամենացանկալի իրողությունը լինի:
Մայրերը նման են միմյանց իրենց հոգսերով ու վշտերով, նման են իրենց հրճվածքով ու մայրական անախի հպարտությամբ: Զավակների յուրաքանչյուր հաջողություն, ամեն մի աննշան թվացող քայլ բազմապատկվում, կատարյալ երջանկություն է դառնում մոր համար:
- Մեր մայրերը գալիս են հավերժից և գնում են դեպի հավերժություն: Մոր թեման հայ գրականության հավերժական նյութն է, անսպառ ատաղձը:
- Մայրը կոչված չէ նկարչի պես կտավին պատկերելու զեղեցիկ նկար կամ քանդակագործի պես մարմարից հրաշալի քանդակ ստեղծելու, թևավոր մտքեր կամ երաժիշտի պես զեղեցիկ զգացումներ մարմնավորելու մեղեդու մեջ:

Նրա առաջադրանքն է Աստծո օգնությամբ մարդկային հոգուն կերտել Աստվածության մամուլությունը:
Ճիշտ են ասում՝ գահին բազմած թագավորը զբաղված է ոչ ավելի կարևոր գործով, քան մայրը: Եվ հանուն այդ մեծ սիրո՞
Եկեք այսօր մենք համբուրենք որդիաբար. Մեզ աշխարհում շահած-պահած... Մեզնից երբեք չկշտացած Մոր ձեռքերը...
Շնորհավոր տոնդ, մա՛յր, եթե կյանքիդ ամեն օրն էլ տոն դարձնեն քեզ համար, էլի քի՛չ է, մայր իմ, սրբության սրբոց:

Նարինե ՉԱՏՐԻՅԱՆ
Սպեթ. հ. 12 հիմն. դպրոցի կազմակերպիչ



ՀԱՅՈՒԷՑԻ

ՆՐԱ ԿԵՅՎԱԾՔՆ ԾՐԻՆԱԿԵԼԻ Է ԵՎ ՀԱՅ ԿԵՆՈՋՆ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ



Բնությունը կնոջն ասել է գեղեցիկ եղիր՝ եթե կարող ես, իմաստուն եղիր՝ եթե ուզում ես, բայց ողջամիտ լինել՝ դու պարտավոր ես:

Պիեռ Բոմարշե

Կյանքում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի մարդկանց, որոնց հետ զրուցելն անզուսպ մեծագույն հաճույք է պարզապես բեզ: Կարողանում ես կտրվել առօրյա հոգսերից և բավականությամբ ունենալ հաճելի զրուցակցիդ: Մտորում ես. ինչ կլինի, որ շրջապատում բոլորը լինեն հեզահամբույր, սիրահոծար և միմյանց հանդեպ դրսևորելի հոգատար և պատրաստակամ վերաբերմունք: Այդպես կյանքն ավելի գեղեցիկ կլինի, իսկ դժվարություններն էլ, թերևս, պակաս կթվային:

Հիրավի, ապացուցելու կարիք չկա, որ հիմնավոր ժամանակներից ի վեր կյանքն առավել գեղեցիկ է դարձնում կին արարածը: Անսովորապես, հայ կանայք, որոնք մշտապես կարողացել են պահպանել հայ կնոջն արժանավայել կեցվածքը: Յուրաքանչյուր հայուհի մշտապես ցանկանում է լինել գեղեցիկ, նվիրված, խելացի, հպարտ: Կանայք հավատարիմ մնալով իրենց ներհատուկ հատկանիշներին՝ շարունակում են գերել, արարել և հասնել բազում բարձունքների: Կանանց միջազգային տոնական միասնակի կապակցությամբ իմ մեջ

ցանկություն առաջացավ հանդիպել և շնորհավորել մի մարդու, ով արժանի է մեծարման ու գնահատման: Մարդ, որը տարիներ ի վեր աչքի է ընկել իր նվիրվածությամբ ու պարտաճանաչությամբ:

Ասկերանի Գուրգեն Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանի գլխավոր գրադարանավար Մարիետա Բալասանյանին ճանաչում են շատերը: Գերադասեցի նրա հետ հանդիպել հենց գրադարանում, ուր շուրջ 37 տարի աշխատում է գրքերի մեջ ու ծառայում մանուկներին և երիտասարդ սերունդին: Երբ մտա գրադարան և հայտնեցի իմ այցելության նպատակը, բավական հուզմունք նկատվեց տիկին Մարիետայի աչքերում: Գուրգեն և հոգու խորքում ինձամիջ սպասում էր նման անակնկալի, չէ՞ որ դեռևս մանկուց գրքի սիրահար էի և գրադարանի մշտական հաճախորդ: Հիշում եմ, թե ինչպիսի մեծ սիրով էի գրադարան հաճախում, ուր տիկին Մարիետան դրսևորում էր ոչ միայն գրադարանավարի հատուկ կեցվածքը: Նրա մանկավարժական տակտը, մայրական գորովակից վերաբերմունքն իմ մեջ իմաստավորված է առայսօր, ու երևի թե այդ է պատճառը, որ հետագայում ընտրել եմ նաև գրադարանավարի մասնագիտությունը: Տարիներ անց աշխատելով Ասկերանի կենտրոնական գրադարանում՝ ավելի եմ համոզվել տիկին Մարիետայի մեծության մեջ: Նրա բարոյահոգեբանական ցայկցությունը (արդեն որպես գործընկերուհի) բազմիցս եմ զգացել ու հիացել նրա պահվածքով, թերևս, հետապետեալստիպան տարիներին բոլորն էին զգում հոգատարության, փոխըմբռնման կարիք...

Մարիետա Բալասանյանը ծնվել է 1950 թվականի մարտի 6-ին, Ասկերանում: Սկզբնական կրթությունը ստացել է Ասկերանի ութամյա դպրոցում, այնուհետև շարունակել է 1967թ. ավարտել է Ասկերանի շրջանի ԽՍՆԱԿատի միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է

երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն բաժինը: 1975թ. համալսարանն ավարտելուց հետո աշխատանքային գործունեությունը սկսել է Ստեփանակերտի շրջսովետի կուլտուրայի բաժնում՝ որպես շրջանային բաժնի գրադարանավար: 1977թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի շրջանի ԳԿՀ-ի շրջանային մանկական գրադարանի վարիչ: Շուրջ 17 տարի աշխատել է մանուկների հետ՝ նրանց մեջ սեր սերմանելով դեպի գիրքն ու գիտելիքը և հասկացնելով նրանց, որ աշխարհում ամենագոր զենքը գիտելիքն է:

Աշխատանքին գուզընթաց համատեղությամբ ծավալել է մանկավարժական գործունեությունը: 1978-1983թթ. դասավանդել է Ասկերանի շրջանի հեռակա միջնակարգ դպրոցում:

1995թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի մշակույթի բաժնի կենտրոնական գրադարանի սպասարկման բաժնի վարիչի պաշտոնում: 2009թ. տեղափոխվել է նշանակվել է Ասկերանի Գ. Գաբրիելյանի անվան կենտրոնական գրադարանի գլխավոր գրադարանավար:

Հաճելի ու անկաշկանդ զրույցի ժամանակ, որը հետաքրքրությամբ ունենդրում էին նաև գրադարանի մյուս աշխատողները, անմոռանալի հուշերի գիրկն ընկանք: Իրոք, կան մարդուն ի վերուստ տրված բյուր շնորհներ, բնավորության գծեր, որոնցով նրանք տարբերվում են իրարից: Թերևս, տիկին Մարիետային յուրահատուկ են կամքի ուժը, աշխատանքի հանդեպ պատասխանատվությունը, նվիրվածությունն ու աշխատասիրությունը:

Ընտանիք կազմելով Կասյանների հզոր գերդաստանի գավակ Արտյոմ Կասյանի հետ՝ կարողացել են Ասկերանի շրջանում վայելել մեծ հարգանք և սեր: Նրանց ընտանիքում դաստիարակվել է երկու զավակ, որոնք մշտապես ծախվել էին զգում կրթության հանդեպ: Հար-

կավ, բոլորը կհամաձայնեն ինձ հետ, որ Կասյան եղբայրներն իրենց ապուպայերին վայել հետնորդներ դարձան: Այսօր նրանք 33 և ԼՂՂ ՊԲ պատվավոր սպաներ են: Այո, ճիշտ և հայեցի դաստիարակությունը հնարավոր չէ, որ չտա իր արդյունքը, այն էլ այն ընտանիքում, ուր հայրենասիրությունն ու հավատարմությունը վեր են ամեն ինչից:

Արցախյան պատերազմից հետո Կասյանների ընտանիքը, հարմարվելով հետապետեալստիպան դժվարություններին, լծվել էր հայրենի Ասկերանը շենացնելու գործին: Այս ընտանիքում, որտեղ տնօրինում էր ջերմությունը, հավատարմությունը, մեծ ակնկալիքներով էին տրամադրված: 21-՝ որ շուտով որդիներն առանձին ընտանիքներ պիտի կազմեին և Արցախի շեն օջախներն ավելացնեին: Ավա՞ղ, ճակատագիրը չկարողացավ այս ընտանիքի հանդեպ մնալ բարյացակամ: Պատերազմի անողոր թոհուրեով անցած Արտյոմ Կասյանը՝ 1998թ. անբուժելի հիվանդության զոհ դարձավ: Թվում էր, թե կյանքը կանգ կառներ Կասյանների օջախում: Ասկերանի ողջ հասարակությունը սգում էր մի անհատի կորուստ, ով հայրենասիրության և բնատուր խելիքի մարմնացում էր, ով ասես մի բարձր սար լիներ իր հարազատների, ընկերների համար... Սակայն հայ կնոջ առաքինի կերպարը նորից ի հայտ եկավ և իմաստավորվեց տիկին Մարիետայի մեջ: Նա կարողացավ իր մեջ բավական ուժ գտնել և առաջ նայել՝ թերևս, ամուսնու հիշատակի առջև պարտավորություն զգալով: Այո, պարտավոր էր գավակներին առաջնորդել լուսավոր և արժանի ճանապարհով:

Սահեցին տարիները... Տարիներ՝ շաղախված հաջողություններով և դժվարություններով: Տիկին Մարիետայի որդիներն ընտանիքներ կազմեցին, օջախին արժանի հարսները ընտանիքի մոր համար դուստրեր դարձան: Նրանք գնահատեցին հայուհուն վայել բոլոր ար-

ժանիքներով օժտված կնոջը:

Հիրավի, երբ աստված արարել է կին արարածին, նրան բազում ծիրքեր տալու հետ մեկտեղ, չի գլացել անսասան ուժ, հզոր կամք և համբերություն շռայլելու: Ահավասիկ, իմ հերոսուհին, որն այսօր կարող է միանգամայն ասել. «Ես հասել եմ իմ նպատակներին, կրթել և դաստիարակել եմ իմ երկրին արժանի գավակներ և շարունակում եմ նույն ոգով դաստիարակել թոռներին»:

Այսօր ես այնքան երախտապարտ եմ և գոհ, որ գնահատված եմ հասարակության կողմից, որ արժևորված է գրադարանավարի աշխատանքը: Միշտ էլ հաճույքով եմ աշխատել մանուկների հետ և ամեն կերպ ցանկացել նրանց մոտ ավելի անրապնդել սերը դեպի գիրքը, կրթությունը: Մեր երկրի ապագան այսօրվա մատաղ սերունդն է, որի հանդեպ պետք է դրսևորեն ամենաուշադիր և ամենանբանկատ վերաբերմունք: Այնպես անենք, որ նրանք հասկանան, որ իրենք են այսուհետ տերն Արցախ աշխարհի:

- Այս գեղեցիկ տոնի առթիվ ցանկանում եմ շնորհավորել բոլոր կանանց և մարդեք, որ միշտ լինեն հմայիչ, ողջամիտ և երբևէ չկորցնեն իրենց կանացիությունը,- ասաց Մարիետա Բալասանյանը:

Հիրավի, մեծ տպավորություն ստացա իմ հանդիպումից: Անցյալի և ներկայի հուշերն իրար միահյուսված՝ թևածուռ էին գրադարանի ջերմ մթնոլորտում: Այնքան մեծ ոգևորություն և խանդավառաց էր նկատվում ամենքի դեմքին: Աշխատողները նույնպես հիացած լսում էին ավագ գործընկերոջը՝ միանշանակ դասեր քաղելով նրա խորհուրդներից ու բազում պատմություններից:

Շնորհավոր տոնը, սիրելի Մարիետա: Քեզ ամուր առողջություն, և թող հայ կնոջն արժանավայել և օրինակելի թո կեցվածքը միշտ անսասան լինի:

ԿՈԿԻԿ ԵՎ ՔԵՆՈՒՇ, ՆՐԱՆԱԿԱՏ ԵՎ ՍԻՐԱԼԻՐ

Կին... Այս մի հատիկ բառի մեջ այնքան խորունկ իմաստներ են ներառված, այնքան հույզեր ու անեղծվածներ, այնքան գոռտրիկ մտքեր ու ցանկություններ: Յուրաքանչյուր կնոջ մեջ կարելի է տեսնել առանձնահատուկ քնքշանք, նրբություն, գեղեցկություն, իսկ կանացի սեքսեթանքը կնոջ անբաժանելի ու հավատարիմ ընկերն է եղել մշտապես: Սակայն ամենամեղմ ու ամենականացի կնոջ մեջ արքայավայել նստած է կամքի հզոր ուժ, քաջություն ու ակնբախ հայրենասիրություն:

Դեռևս վաղընթացիկ տարիներից հայ կինը կարողացել է ապացուցել, որ իր ազգի արժանի դուստրն է, որ կարողացել է գործի գիշեր մաքառել տղամարդկանց կողքին՝ երբեք չզիջելով առաջին գիծը: Այսօր էլ մեր շրջապատում տեսնում ենք այնպիսի կանանց, որոնց հանդեպ անսահման սեր և հարգանք ենք տածում, արժևորում նրանց ավանդը: Խոնարհվելով արցունքի ու ցավ տարած բոլոր հայ կանանց առջև՝ նրանց տալիս ենք մեծարանքի ու ակնածանքի մեր խոսքը: Հիրավի, բոլոր հայ կանայք արժանի են ուշադրության և վաստակել են երջանիկ լինելու իրավունքը:

Գեղեցիկի, սիրված լինելու, հրաշքի սպասման, հաճելի խոսքեր լսելու, հավերժականի մասին մտածելու խորհուրդ ունի կանանց նվիրված միամտակը, որը նաև զարթոնքի ազդարարում է: Աստուծո՛ր, թե կինն ու գարունը չեն տարբերվում միմյանցից: Գարունը հենց կինն է՝ միշտ ծաղկող, փթթուն, կինն էլ իր եղբայրն է գարունն է իր կա. հանելուկներով ու անակնկալներով լի:

Հիշում եմ, երբ դպրոցահասակ էիք, մեզ համար գեղեցկության և կանացիության մարմնացումը մեր ուսուցչուհիներն էին: Նրանք մաքրության, գեղեցկության և նրբակերտության խորհրդանիշ էին սովորողներին համար, մենք ոչ միայն հիանում էինք նրանցով և ցանկանում՝ ընդօրինակել, այլև անթա-

քույց սիրում էինք նրանց:

Ամալյա Շիրոյան: Ասկերանի Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի հարգված ուսուցչուհի: Կոկիկ և քնքշ, նրբանկատ և սիրալիր. ահա այսպիսին են հիշում ընկեր Շիրոյանին: Նրա հետ ունեցա հաճելի առանձնագրույց, որը նաև հոգեբանության յուրօրինակ դաս լինելու ասես:

- Ընկեր Շիրոյան, նախ շնորհավորելով Ձեզ՝ կանանց միամտակի կապակցությամբ, կցանկանայի լսել Ձեր կարծիքն այս տոնի վերաբերյալ:

- Նախ բնությունն ինքն է շնորհավորում գեղեցիկ այս տոնը՝ զարթոնքի ու արարման իր հրաշալի ծեսով, որն ասես փոխանցվում է բոլորին, խառնվում նրանց ժայտներին, ծառագուն աչքերի մեջ: Բազմաթիվ տարիներ աշխատելով երեխաների հետ՝ չեմ կարող ցանկանում տոն չկապել նրանց հետ: Ինձ համար իմ երեխաները մնան են ծյունաբաթախ, ծյունաբաթու, ծյունահոտ ծաղիկ:

Կինը սեր է, ջերմություն, գեղեցկություն: Կյանքի իր ճանապարհը կինն անցնում է սիրելով: Չմայած այդ ճանապարհը նրան բերում է և անպակաս գիծ երջանկություն, և հորիզոններ հաղթահարելու ամենագոյություն, և տառապանք, ճիշ, ընդվզում աշխարհի, մարդու, ինքն իր դեմ: Տառապանքի ու երջանկության մշտնջենական այդ հակամարտությունում հաղթում է կինը: Բյուրեղանում է, բարձրանում՝ ձգտելով լինել, կայանալ:

- Արցախցին անցել է դժվար և դաժան ճանապարհ: Ի՞նչը մեզ հայ պահեց, և ինչի՞ հասանք:

- Այն դժմուկ օրերին, երբ մարդիկ միաբռնուցք ոտքի էին կանգնել, երբ չկար իմ ու թո՛ւրի գաղափարը, ամեն ինչից վեր կանգնած էր մարդկային մի համերաշխություն, մտքերի ու հույզերի զարմանալի մի ընդհանրություն:

Ճակատագիրը դաժանորեն գետնով տվեց

ին ժողովրդին. երկրաշարժ, պատերազմ: Այնուամենայնիվ, հայը կանգնեց ճակատագրին դեմ հանդիման՝ հաղթելու հաստատակամությամբ:

Կործանվում է նա, ով կորցնում է երազի ճամփան: Մեր մասին ասում են, որ մենք երազող ժողովուրդ ենք: Փառք ասած, որ դա համապատասխանում է իրականությանը: Այսօր, մենք պարտավոր ենք մտածել մեր երկրի ապագայի, այն շենացնելու մասին: Իսկ մեզ՝ ուսուցիչներին, վերապահված է ամենակարևորը. ճիշտ դաստիարակել մատաղ սերունդին, երեխային անկաշկանդ ու ինքնաբերական խոսել և գրել սովորեցնել, նրա մեջ բարձրացնել սերը գիտելիքի հանդեպ: Մենք պետք է կարողանանք երեխաների մեջ սեր սերմանեցնել աշխարհի ու մարդու նկատմամբ:

- Ձեր ակնհայտ նրբանկատությունը, կյանքի փորձն ու հոգատարությունը դիմացինի հանդեպ հայտնի է շատերին, միաժամանակ Ձեզ հատուկ են ճշմարտախոսությունն ու տեղին քննադատությունը: Ի՞նչ կասեիք սկսնակ ուսուցիչների մասին:

- Ինքսին հասկանալի է, որ ապագան երիտասարդներինն է և, իմ կարծիքով, այսօր այն ապահով ձեռքերում է: Մեծագույն բերկրանք են զգում, երբ տեսնում են, թե ինչպիսի ոգևորությամբ են սկսնակ ուսուցիչները մղվում աշխատանքին: Նրանք անընդհատ խորհրդակցում են փորձառու ուսուցիչների հետ՝ լսում նրանց խորհուրդները և հաշվի առնում: Նրանցից յուրաքանչյուրը ցանկության, հաստատակամության, ստեղծագործական ակյուն ունենալու դեպքում կարող է դառնալ ինքնուրույն, անկրկնելի մասնագետ և անձնավորություն:

- Դուք հայոց լեզվի և գրականության հիանալի մասնագետ եք, ի՞նչը մեզ Ձեզ նախընտրելի հենց այդ առարկան:

- Գրականությունը և գիտությունն է, և՛ ար-



վեստ: Այդ առանձնահատուկությամբ է պայմանավորված գրականության ուսուցչի մասնագիտությունը: Գրականությունը մարդու հայտնի է, իսկ գրականության ուսուցիչը մտքի ու սրտի մարդ է, քանզի նա հստակ պետք է պատկերացնի մարդուն: Գրական ստեղծագործության օրինակները զուգորդվում են իրական կյանքի հետ՝ գրականության դասերը դարձնելով կյանքի դասեր:

- Ձեր բարեմաղաքները կանանց: - Այս հիասքանչ տոնի առթիվ ցանկանում եմ բոլոր կանանց խաղաղություն: Թող այլևս ոչ մի մայր չարտասալի, ու անձնական երջանկությունն ուղեկցի բոլորին: Կանայք լինեն մշտապես գնահատված, սիրելի ու քնքշ: Հիրավի, կինն արժանի է ամենամեծ ուշադրության ու արժևորման:

Արդարև, արժանապատվությունը ձեռքբերվելի չի լինում: Այն մարդուն տրվում է ի վերուստ, և փառք ու պատիվ այն մարդուն, ով ամբողջ կյանքում ապրում է հավատարիմ իր եղբայրն՝ բարձր պահելով արժանապատվությունը:

Կարինե ԲԱՆԾԻՅԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՈՍՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Մայրենի լեզվի ուսուցման հարցը եղել և մնում է մանկավարժության հիմնական խնդիրներից մեկը, որովհետև մայրենի լեզվի ուսուցումը երկարաժամկետում ունի այն թե՛ որպես գիտելիքների ձեռքբերման միջոց, մեծապես նպաստում է երեխայի հոգևոր ուժերի զարգացմանը, նրա՝ որպես հասարակության անդամի, մարդ-քաղաքացու ձևավորմանը:

Մայրենի լեզվով երեխան ամեն ինչ հեշտ ու արագ է ստանում ու յուրացնում, ուստի և, ավելի լավ, ավելի բազմակողմանի ու խոր զարգացում ու առաջընթաց է ապրում:

Մայրենի լեզվի ուսուցման բնագավառում առաջին քայլերը երեխան անում է ընտանիքում՝ ծնողների ու մեծերի շրջապատում, նրանց հսկողությամբ ու աջակցությամբ: Այս առումով լեզվի ուսուցման համար երեխայի կրտսեր տարիքն անփոխարինելի մի ժամանակաշրջան է. այդ տարիքում երեխան երբեմն իր համար էլ աննկատելի կերպով, հազարավոր նոր բառեր, արտահայտություններ ու դարձվածքներ է սովորում, տարերայնորեն սեփականում մայրենի լեզվի այն բնական ատաղձն ու յուրահատկությունները, որոնք հաճախ շատ մեծ ջանքերի գնով է հաջողվում ավելի բարձր տարիքում: Այս հանգամանքը պետք է հաշվի առնել և ժամանակին ու ճիշտ օգտագործել երեխայի տարիքային առանձնահատկությունների ընձեռած ուսուցողական մեծ հնարավորությունները՝ նրա մեջ լեզվագաղտություն մշակելու, մտածողություն ու խոսքի զարգացումը ճիշտ էրևցնելու մեջ դնելու համար: Երեխաների խոսքի ու մտածողության զարգացման համար բացառիկ նշանակություն ունի ընտանիքը, որովհետև մայրենի լեզուն նա սկզբնապես սովորում է ընտանիքում, իսկ լեզվի հետ ձևավորվում է նաև նրա մտածողությունը: Ընտանիքում սովորածն է, որ հետագայում հինք է դառնում կազմակերպված ուսուցման համար, մշակվում ու կատարելագործվում է դպրոցում: Առանց ընտանիքի տված լեզվական հիմքի դպրոցի գործը շատ կոճվարանա, այդ պատճառով էլ ընտանիքում երեխայի խոսքի զարգացման վրա լուրջ ուշադրություն պետք է դարձնել:

Ինչպես Միքայել Նալբանդյանն է նկատել՝ հայրենի հարկի տակ հնչող մայրենի խոսքը բացառիկ կարևոր դեր կարող է խաղալ երեխայի լեզվի ու մտածողության մշակման ու զարգացման գործում: Դեռ այստեղ՝ հայրենի հարկի տակ, մայրական կաթի ու գուրգուրանքի հետ է, որ երեխայի մեջ ձևավորվում է սկզբնական լեզվագաղտությունը: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Նալբանդյանը վճռականորեն բողոքում էր հայ ընտանիքներում օտար լեզվով խոսելու արատավոր սովորության դեմ, որովհետև այդպիսի ծնողները խախտում են երեխայի հոգեկան զարգացման բնական ընթացքը, աղճատում նրա լեզուն ու մտածողությունը և ազգին տալիս «կեղևով միայն հայ զավակներ»:

Երեխայի խոսքի ու մտածողության մշակումն ու զարգացումն ամեն մի ընտանիքի ու ծնողի գլխավոր հոգսը պետք է լինի՝ սկսած

նրա առաջին թրթվանքից մինչև ինքնուրույն կապակցված խոսքի ստեղծումը, բառը ճիշտ արտասանելուց ու տեղին գործածելուց մինչև խոսքի գեղեցկացումը: Դեռևս արժեքավոր յուրաքանչյուր ծնողի համար հույժ անհրաժեշտություն է լավ իմանալ այն բոլոր միջոցներն ու ձևերը, մեթոդական գոնե այն պարզ եղանակներն ու հնարները, որոնք հարկավոր են երեխայի խոսքի մշակման ու զարգացման համար: Այդ միջոցներից ամենահիմնականը ընտանիքում հնչող խոսքն է, ծնողների ու ընտանիքի մյուս անդամների խոսքի մաքրությունը, ճշտությունը ու գեղեցկությունը: Ինչպես ընտանիքում են խոսում, այնպես էլ այդ ընտանիքի երեխաներն են խոսում՝ սովորելով մեծերից, ընդօրինակելով նրանց խոսքն ու խոսելու եղանակը:

Ամեն օր լսելով իրեն շրջապատող մարդկանց կանոնավոր ու գեղեցիկ գրական խոսքը՝ երեխան մեծապես ազդվում է դրանից, ընդօրինակում և սեփականում է այն: Երեխայի հետ խոսելիս թե նրան դիտողություն անելիս, որևէ հետ զրուցելիս թե նրա համար որևէ բան պատմելիս ծնողը միշտ պետք է հատուկ ուշադրություն դարձնի իր խոսքին՝ հետևի բառերի ծանր ու հասկանալի լինելուն, մտքերի պարզությանն ու մատչելիությանը, լեզվի կանոնավորությանն ու գեղեցկությանը: Պետք է ընտանիքի յուրաքանչյուր անդամն այս հարցում իրեն պատկերացնի որպես ուսուցիչ, սովորեցնող, խոսքի կենդանի օրինակ տվող և, ըստ այդմ, մաքրի, կանոնավորի ու գեղեցկացնի իր խոսքը: Սխալ են այն ծնողները, ովքեր երեխայի հետ աղավաղված, ինչպես ստում են՝ «ծոխ լեզվով» են խոսում: Երեխան միշտ պետք է լսի մաքուր, ճիշտ ու հստակ խոսք, որովհետև այն ընդօրինակվելու է:

Երեխայի խոսքի մշակման ու զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև նրա խոսքի անընդհատ հղկումն ու կատարելագործումը: Դրա համար պետք է երեխային խոսեցնելու, պատմելու ու արտահայտվելու հնարավորություն տալ, որպեսզի նա վարժվի խոսելու մեջ և երկրորդ՝ հնարավոր դառնա նրա լեզվակազմ-արտասանական թերություններն ի հայտ բերել և դրանց վերացման ու ճշտման ուղղությամբ անհրաժեշտ աշխատանք տանել: Դաճախակի կրկնվող ակտիվ երկկողմյան զրույցի դեպքում երեխան ոչ միայն հարցեր է տալիս, այլև հաճույքով ու պատրաստակամությամբ պատասխանում է տրված հարցերին, ընդարձակ ձևով պատմում է իր տեսածի, լսածի ու զգացածի մասին: Ծնողները պետք է անպայման ժամանակ հատկացնեն երեխաներին՝ նրանց «բլբլոցը» լսելու, թույլ տված սխալներն ուղղելու, այդ ընթացքում նոր բառեր ու արտահայտություններ սովորեցնելու համար: Այսպիսի փոքրիկ «գոհողությունները» երբեք զուր չեն անցնում և անփոխարինելի նշանակություն են ունենում երեխաների համար ոչ միայն նրանց լեզվի ու մտածողության զարգացման, այլև դաստիարակության համար՝ հատկապես երեխաների ու ծնողների միջև ամուր կապ ստեղծելու առումով:

Փոքրիկների պատկերացումներն ու բառապաշարը հարստաց-

նելու, նրանց մեջ կապակցված խոսք կառուցելու կարողություն մշակելու, ինչպես նաև ընդհանրապես խոսել ու արտահայտվել սովորեցնելու տեսակետից խիստ օգտակար պետք է համարել նաև թեմատիկ նկարների, դիաֆիլմերի, մուլտիպլիկացիոն ու մանկական կինոնկարների, տեսագրությունների և այլ ցուցադրական նյութերի դիտումները: Այդպիսի ցուցադրումների ժամանակ ևս ծնողները պետք է վերահսկողի, առաջնորդողի ու կողմնորոշողի դերում լինեն:

Շատ արժեքավոր ու օգտակար պետք է համարել տիկնիկային ու թատերական ներկայացումների դիտումները, որոնք ոչ միայն որոշակի բովանդակություն, այլև պատրաստի լեզվական ձևեր են տալիս երեխաներին, սովորեցնում են գեղեցիկ խոսք կառուցել, տիրապետել խոսքարվեստին: Այս դեպքում երեխան շփվում է կենդանի խոսքին, մտովի հաղորդակցվում է դերակատարների հետ, ընդօրինակում նրանց գեղեցիկ արտահայտություններն ու խոսքի հնչեղանքը, բառերն ու արտասանության եղանակը:

Երեխաների խոսքի զարգացմանը մեծապես նպաստում է հեքիաթներ ու պատմություններ պատմելը: Դեքիաթների ու փոքրիկ պատմությունների ունկնդրումը նրանց համար հաճելի զբաղմունք է և սակայնակա ուսուցողական արժեք ունի ոչ միայն խոսքի զարգացման, այլև աշխարհաճանաչողական տարաբնույթ գիտելիքների ու տեղեկությունների ձեռքբերման առումով: Ծնողները պարտավոր են ազատ ժամերին երեխաների համար գեղեցիկ հեքիաթներ ու կարճ մանկական պատմվածքներ, հետաքրքրաշարժ նյութեր կարդալ կամ պատմել և ապա հետևել, որ նրանք վերարտադրեն ստացած տպավորությունները, դրանց կապակցված խոսքի տեսք տան: Այս աշխատանքը մեծապես կնպաստի նաև երեխաների գեղագիտական ճաշակի մշակմանը՝ նրանց գեղեցիկ օրինակ տալով, հաղորդակից դարձնելով խոսքարվեստին:

Երեխաների խոսքի զարգացմանն ու գեղարվեստական ճաշակի մշակմանը նպաստում են բանաստեղծությունների անգիր անելն ու երգերի ուսուցումը: Ուսանավորները երեխաներին սովորեցնում են զգալ խոսքի ռիթմն ու երաժշտությունը, գեղեցկությունն ու բարեհնչունությունը, դրանք երեխաներին տալիս են կապակցված բառեր, արտահայտություններ ու գեղեցիկ պատկերներ:

Խոսքի ու մտածողության զարգացման տեսակետից երեխաներին շատ բան կարող են տալ այցելությունները թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ: Այս միջոցառումները երեխաների համար հսկայական ու անփոխարինելի նշանակություն կունենան նրանց մտավոր պաշարի հարստացման, գեղագիտական ճաշակի ու խոսքի մշակման համար:

Խոսքի զարգացման տեսակետից բացառիկ արժեք ունեն բնության գրկում անցկացվող զբոսանքներն ու դեպի բնություն կազմակերպվող նպատակային էքսկուրսիաները:

Բնության գրկում եղած ժամանակ երեխաների մեջ տասնյակ

հարցեր են ծնվում շրջապատի առարկաների, երևույթների, գույների ու ձայների վերաբերյալ, դրանց ամենայն համբերատարությամբ, մտածված ու մատչելի ձևով պետք է պատասխանել:

Երեխաների խոսքի զարգացման ուղղությամբ տարվող աշխատանքներում հատուկ ուշադրություն պետք է դարձնել բառերի ու արտահայտությունների ճիշտ ու տեղին օգտագործմանը, որովհետև առանց գործուն միջամտության, ինքնահոսի թողնելով, դրանք շատ ուշ կարող են վերածվել կարողության, այնինչ անհրաժեշտ է, որ լեզվական կարողությունները երեխայի մեջ ձևավորվեն հնարավորին չափ արագ ու հեշտ, որպեսզի սովորած ամեն մի նոր բառ ու արտահայտություն անմիջապես մտնի երեխայի գործուն բառապաշարը, դառնա հաղորդակցման միջոց: Եթե երեխային շրջապատող մարդկանց խոսքին առաջադրվող պահանջներում հիմնականը նրա պարզ, մատչելի, գեղեցիկ, հակիրճ ու դիպուկ լինելն է, ապա այս աստիճանում երեխայի խոսքին առաջադրվող ամենահիմնական պահանջը նրա ճշտությունն է: Խոսքի ճշտությունը նրա զարգացման ու առաջընթացի, նրա լեզվական հիմնական գործառնության ճիշտ ու անթերի դրսևորման առաջին պայմանն է: Եթե խոսքը ճիշտ չէ, ուրեմն, այն չի կարող ճիշտ արտահայտել մարդու մտքերն ու զգացմունքները և հետևաբար՝ դիմացիին հաղորդել, փոխանցել դրանք: Այս առումով երեխայի ասած ոչ մի բառ ու նախադասություն անուշադրության չպետք է մատնել: Եթե այն լեզվական կամ արտասանական տեսակետից ճիշտ չէ, ուրեմն՝ հաղորդակցման իր գործառնություն չի արժեք կատարել չի կարող: Սկզբում կարելի է բավարարվել միայն սխալ ասածը ճշտելով ու այդ ճիշտ երեխային կրկնել տալով: Սակայն երեխայի խոսքի ու մտածողության զարգացմանը զուգընթաց պետք է անցնել նաև լեզվական սխալների ուղղման ավելի գործուն ու արդյունավետ ձևերի գործադրմանը:

Նախադասության և կրտսեր դպրոցական տարիքում շատ օգտակար կարող է լինել երեխայի խոսքի գեղեցկացման ուղղությամբ տարվող աշխատանքը: Այն կարելի է սկսել երեխային շրջապատող ծանոթ առարկաների ու երևույթների հատկությունները նկատել տալուց, այդ առարկաներին ու երևույթներին համապատասխան հատկանիշներ վերագրելուց՝ վարդ կարմիր է, սպիտակ է, դեղին է, հոտավետ է, բացված է, գեղեցիկ է, փշոտ է, կոկոն է... և կամ՝ դեղին վարդ, սպիտակ վարդ, հոտավետ վարդ...

Ամենօրյա ուշադրությունն ու հսկողությունը երեխայի խոսքի նկատմամբ անպայման իր արդյունքը կտա, և նա, իր առաջին թրթվանքերից սկսած, կսովորի ճիշտ ու գեղեցիկ խոսել, զգալ իր մայրենի լեզվի գեղեցկությունն ու հարստությունը, ապրել դրանով, իր համար այն գեղեցիկ դարձնել կյանքի պայքարում:

**Պայանե ՍՈՂՈՍՈՅԱՆ
ՀՀ ԿԸՆ ԿԱԻ ԼԴՀ
մասնաճյուղի գրականության
մասնագետ**

**ՈՎ ԶԻ ԻՄԱՆՈՒՄ ՈՒ
ԳԵԱՆԱՏՈՒՄ ԻՐ
ԱՆՅԱԼԸ, ԶԻ ՈՒՆԵՆԱ
ՀՈՒՍԱԿ ԵՂԱԳԱ**

Տ - Երդվում են իմ պատվի ու ազգության վրա, իմ բոլոր ուժով, եթե հարկ լինի՝ նաև իմ արյունով ծառայել Զայաստանի ազատագրության դատին՝ ընդդեմ սուլթանի բռնակալության: Այսուհետ իմ բարձր Զայաստանի լեռները կլինեն և իմ ամենամեծ բաղձանքը՝ հայրենիքի համար մեռնելը: Բարով արժանանա հրեղեն գնդակի համբույրին:

Մշակույթները, մեկը մյուսին շարունակելով, ներկայացրին Նիկոլ Դումանին՝ ինքնակենսագրական տվյալներից մինչև թուրք զավթիչների դեմ մղած եռանդուն պայքարը (1894-1896) Արևմտյան Զայաստանում (Վան, Կարին, Տրապիզոն): Մանրամասն նշեցին, թե ինչպես է նա կազմակերպել 1897թ. հունիսի 25-ի Խանասարի արշավանքը և վրեժ լուծել քրդական մագրիկ ցեղերից: Ներկայացրին 1905-1906թթ. հայ-թաթարական (արդեբեյանական) ընդհարումների ժամանակաշրջանի ամբողջ կողորհը և նրա ակտիվ մասնակցությունը 1910թ. Կոպեհնագետի 2-րդ կոնգրեսին: Երեխաները հուզմունքով ու ակտիվությամբ նշեցին, որ Դումանը ինքնասպան է եղել 1914թ., Բաքվի Լարիմովի անվան հիվանդանոցում: Երեխաների այն հարցին՝ «Ինչո՞ւ ինքնասպան եղավ Դումանը», մենք պատասխանեցինք. «Դումանը հեղափոխական էր ամբողջ էությամբ, նա չէր հասկանում կյանքն առանց հեղափոխական գործունեության և միշտ կրկնում էր, թե մարդ 50 տարեկանից անց արդեն անպետքական է հեղափոխական գործի համար, ու նրա կյանքն անարժեք է դառնում: Այս մտայնությունը և թոքախտը օրեցօր բարդանալով խիստ ճնշում էին նրան, և նա չցանկացավ այլևս ապրել անգործ ու տառապել»: Բնութագրելով ու ամբողջացնելով Դումանի կերպարը՝ մենք ընդգծեցինք, որ ժամանակակիցները նրան համեմատել են Նապոլեոն Բոնապարտի, մարշալ Նեյի հետ: Արտաքնապես նա եղել է գեղեցիկ, բարձրահասակ, բարեկազմ, բնականից խելոք, զգաստ, հեռատես, ներողամիտ, բարի: Զատկություններ, որ հատուկ են մեծ հոգու, ուժեղ կամքի ու խելքի տեղ մարդկանց: Նա ուներ բացառիկ ռազմական ոգի: Ռազմագիտությունը նրա մեջ մեռցնում էր մյուս բոլոր փայլուն ընդունակությունները:

Եզրափակելով դասը՝ ընդգծեցինք, որ Նիկոլ Դումանը մեծ հեղինակություն էր մեր բոլոր ֆիդայիների համար՝ ամենահամեստ զինվորից մինչև Զրայր, զորք Չաուշ, Վարդան (նույն գյուղի ֆիդայի) ու Անդրանիկ: Բոլորն էլ հավասար սիրով պատրաստ էին ենթարկվելու դարաբաղի լեռնականի պողպատե կամքին: Նրա մահից առաջօր անցել է ավելի քան մեկ դար, սակայն Դումանի հերոսական կերպարը տարիներ շարունակ ոգեշնչման օրինակ է եղել սերունդների համար: Յուրաքանչյուր ոք պարտական է իր հոգու գողտրիկ մի անկյունում հիշել և գլուխ խոնարհել բոլոր ֆիդայիների հիշատակի առաջ, քանի որ նրանց ճգնառությամբ և նահատակությամբ մեր ժողովուրդը հարատևեց: Դեռևս երբ նրանց օրինակին՝ Արցախի հայ քաջերը նույնպես հասան իրենց նպատակին: Այսօր նրանց արյան գնով ազատագրված մեր հայրենիքն ազատ ու անկախ է:

Եկեք փառք տանք ֆիդայիների ոգով դաստիարակված նահատակներին, գլուխ խոնարհենք ու աղոթենք նրանց հոգու համար:

**Լարիսա ՍՈՐՏԻՐՈՅԱՆ
Սյրեկ. հ. 8 ավագ դպրոցի
պարմության ուսուցչուհի**

ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅՈՒՆ

ՈՐ ՄԻԱՆԱՆԷ՝ ԿՈՒԾԵՂԱՆԱԼԵ

Վերջերս Քաջաթաղի շրջանի Սարատակի միջնակարգ դպրոցի (տնօրեն՝ Գևորգ Դավթյան) աշակերտները և ուսուցիչները բարեկամական այցով եղան Ստեփանակերտի 3ովհաննես Թումանյանի անվան հ. 9 միջնակարգ դպրոցում (նախաձեռնությամբ կրթության բաժնի տարրական դասարանների գծով տեսուչ Ս. Թամազյանի):

Տառապանքի իր ազգին բաժին ընկած բարբարոսական սպանդի համար հայրենասեր-մայրը չի մոռանում նաև կյանքի գեղեցկությունների մասին, ստեղծում է հուշ-թանգարանը՝ երգելու նաև ի փառք կյանքի, սիրո, մարդկայնության. նա ամենևին չի կորցնում հույսն ու հավատը:

Այցը հետաքրքիր էր ու բովանդակալից: Այն սուկ երկու դպրոցների միջև ծանոթության և լավագույն նախաձեռնությունների նպատակ չէր հետապնդում, այլ՝ սրտանց խոսելու, իրար ավելին պատմելու, ոգեկոչելու, ներկայացնելու:



Օրվա խորհուրդը վեհ էր ու վսեմաշուք: Դպրոցի փառքի սրահում արիության դաս էր, հավաքվել էին հյուրեր, ուսուցիչներ, աշակերտներ՝ իրենց հարգանքի տուրքը մատուցելու Արցախյան ազգային-ազատագրական պայքարի զոհերի հիշատակին: Աշակերտները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ կարող են հաղթել ոչ միայն զենքով, այլև՝ իրենց հոգեթով երգով, գրչով և իրական, փառապանծ հզոր բանակով:

Շարժման մասնակիցներից է և տառապանքի փորձ ունի, նշեց, թե ինչպես է փորձել պաշտպանել իր ազգի իրավունքը, անմնացորդ նվիրվել ազգային հարցին, և այն տղաները, ովքեր անմահությամբ հաղթեցին մահին, նրանց և՛ փառք, և՛ օրհնանք...

Փառքի սրահում սուրբ նահատակների լռին ու խոսուն նկարների առջև դպրոցի սաները խոնարհվում և երգվում են հայրենասեր զինվոր դառնալ և սրբությամբ ծառայել հայրենիքին, պահել-պահպանել այն հողը, որի համար կյանքեր են նվիրաբերվել:

Դպրոցի տնօրեն Արթուր Անտոնյանը ողջունեց միջոցառման մասնակիցներին, ջերմ ընդունելության արժանացրեց նրանց և ասաց, որ ինչքան էլ պայծառ լինի ներկան ու ավելի վառ՝ ապագան, այնուամենայնիվ, չպետք է մոռանանք նրանց, ում ջանքերով ստեղծվել է նոր կյանք: Եվ արյան գնով ձեռք բերած այսօրվա լուսաշող օրը Սարատակի միջնակարգ դպրոցի աշակերտները եկել են իրենց բարեկամական ձեռքը մեկնելու մեզ, եղբայրանալու, ընկերանալու և ջերմացնելու մեր սրտերը: Այնուհետև դպրոցի դահլիճում ելույթ ունեցան մեր դպրոցի կրտսեր և միջին դասարանների սաները: Աշակերտները ողջունի խոսք հղեցին հյուրընկալ դպրոցի իրենց հասակակիցներին, բացատրեցին «ընկեր» բառի իմաստը և միմյանց հետ բարեկամանալու մասին ցանկություններ մտաբեցին՝

Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մարգարյանն իր խոսքում նշեց, որ շատ ցավ ու արհավիրք է տեսել հայ ժողովուրդը, բայց ամրակուռ է նրա ոգին: Եվ այսօրվա համատեղ միջոցառումն էլ հենց այդ նպատակին է ծառայում, որ բարեկամության հիմնաքարն արդեն դրված է:

Դառնա՞նք մտերիմ ու լավ ընկերներ, Միասին փնտրենք ուսման ուղիներ,

Կակիծով, խոր ցավով ու մորմոքով է անցյալը ներկայացնում նաև զոհված ազատամարտիկ Դավիթ Զակոբյանի թուր Մարինե Զակոբյանը և անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միության նախագահ Գայա Առստամյանը: Կարոտից տոչորվող մոր խոսքերից իմացանք, որ որդու կարոտը տանջում է իրեն, նրա սիրտը միշտ լցված է հայրենիքի սիրով, անհագ կարոտով, ականջը՝ ձայնի...

ՓՐԿԵՆԵ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԵԱՆՈՒՄՑ

- Փրկեցե՛ք ինձ, բարի՛ մարդիկ, ես կործանվում եմ, փրկեցե՛ք ինձ ձեզ համար,- դա բարոյականությունն է հուսահատ աղաղակով: Բարոյականությունը, որ կամաց-կամաց հեռանում է մեզանից, օտարանում, դառնում շատերին անհասկանալի մի երևույթ: Կամ էլ մենք ենք հեռանում նրանից՝ մեզ համարելով ժամանակակից: Զգիտե՛մ՝ ով ումից, սակայն անժխտելի է, որ բարոյականությունը մեր օրերում դարձել է, այսպես կոչված, դեֆիցիտ ու գնալով ավելի, ու ավելի է զգացվում նրա պակասը: Դե՛, նա էլ ստիպված աղաղակում է փրկել իրեն, ո՛վ գիտե, գուցե կլսե՛մ մարդիկ, գուցե դեռ ամեն ինչ կործանված չէ:

Վերջերս Սոսի Զայի Զակոբյանի անունը կրող միջնակարգ դպրոցում տեղի ունեցավ դաս-միջոցառում: 3-րդ դասարանի դասվար Ռիմա Պետրոսյանը միջոցառման թեմա ընտրեց «Բարոյականությունը և ժողովրդական բանասիրությունը»:

Բարոյականությունը հուսահատության մեջ էր, նրան բազմաթիվ կողմերից խոցել էին հայրենատրվող, ազգուրացը, ընկերադավժ ու ծնողուրացը, չարագործն ու անբանը: Ի՞նչ անել: Որտե՞ղ օգնություն փնտրել: Բարոյականությանը օգնության է հասնում ժողովրդական բանասիրությունը՝ խոստանալով նրան փրկել կործանումից իր բազմաթիվ զավակների միջոցով, որոնք են՝ էպոսը, առակը, հեքիաթը, օրհնանքն ու ասացվածքը: Ժողովրդական բանասիրության զավակներից յուրաքանչյուրը բարձր բարոյականության տարբեր դրսևորումներ են:

Երրորդ դասարանից փոքրիկները ոգևորությամբ էին կատարում իրենց դերերը՝ փորձելով բարոյականության դասեր տալ թե՛ փոքրերին, թե՛ մեծերին, ովքեր ավելի շատ ունեն դրա կարիքը:

Դաս-միջոցառմանը մասնակցում էր ողջ դասարանը՝ ամեն մեկն իր հնարավորության ու ընդունակության չափով: Սա կարևոր համագանձ է, երբ ողջ դասարանն է մասնակցում բեմադրությանը, ոչ ոք կողմնակի դիտորդի դերում չէր: Նրանք միահամուռ ուժերով փորձում էին մեզ համոզել, թե որքան քաջություն, հայրենասիրություն ու մարդասիրություն կա մեր Սասնա էպոսում: Այն սովորեցնում է լինել մեծահոգի ու մարդասեր նույնիսկ թշնամու հանդեպ: Թե որքան կարևոր են ընկերասիրությունն ու հավատարմությունը, եթե թեզ կարևոր գործ են վստահել ընկեր-

ները: Պետք չէ դավաճանել ընկերներիդ, եթե անգամ խաբեբայի համբավ ունես:

Նրանք՝ փոքրիկները, համոզեցին լինել աշխատասեր, եթե անգամ արքայադուստր ես կամ էլ հենց արքա:

Երեխաները մեզ ներկայացրին նաև «Գողացված գիրը» բեմադրությունը: Դատապարտեցին տգետ ու չարագործ տիրակալին, ով ուզում էր խավարի մեջ պահել երկիրը, փակի տակ դնել իմաստուններին, գիրն ու գրականությունը, որպեսզի հեշտությամբ տիրի անուս մարդկանց: Տգետ արքան կարծում էր, թե ինքն ամենագոր է, հզոր ու ուժեղ, որովհետև շատ են ընդարձակվել իր երկրի սահմանները, կտրել բազմաթիվ գլուխներ, հատել անհնազանդ ծառաների ձեռքեր, արմատից պոկել լեզուներ:


Մեր փոքրիկները, սակայն, համաձայն չէին տգետ արքայի կարծիքին, նրանք քայլ առ քայլ ապացուցեցին, որ ամենար է ապրել առանց լուսիս, առանց գրի ու մայրենի լեզվի, որ խավարը կկործանի երկիրը, որ առանց գրի մարդ ոչ թե ուժեղ է, այլ՝ պարզապես մժեղ:

Այս միջոցառման մեջ նորություն էր այն, որ դասին մասնակցում էին թե ուսուցիչները, թե՛ աշակերտները և թե՛ ծնողները: Ծնողները զարմանքով պարզեցին, որ իրենց երեխաները մասն ընդունակություններ ունեն, իսկ այդ ընդունակությունները նրանց մեջ բացահայտել է ուսուցչուհի Ռ. Պետրոսյանը: Վերջում աղջիկները հարսի շորերով պարեցին «Մոկաց հարսեր» պարը, ներկայացրին «Թամազարա» երգ-պարը: Երեխաների երգն ու պարը պատշաճ ձևով մատուցելու պատիվը պատկանում է երաժշտության ուսուցիչ Արսեն Բաղդասարյանին:

Դիտորդները գոհ էին միջոցառումից, նրանք մեծ բավականություն ստացան բեմադրված դասից: Իսկ բարոյականությունն այլևս հուսահատության մեջ չէր, նա հրճվածից ժպտում էր՝ նայելով այս փոքրիկներին, նրանց գեղեցիկ պարին, հայեցի երգին, հավատում, որ նրանք ամուր կպահեն իրեն ու չեն կործանի անհետ:

Սուսաննա ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
գ. Սոս

Խոսք հիշատակի
ՎԱՆՅԱՎԱՐԵԳԻՆԻ
ԱՎԱՆԵՍՅԱՆ



Մարտի 22-ին կյանքից հեռացավ ԼՂՀ անվանի գիտնական, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ճարտարագիտության ամբիոնի նախկին վարիչ Վանյա Գարեգինի Ավանեսյանը:

Ծնվել է 1934թ. նոյեմբերի 19-ին, Ս տ ե փ ա ն կ եր տ քաղաքում: 1952թ. ավարտել է հ.2 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին

ընդունվել է Ադրբեջանի Ազիզբեկովի անվան արդյունաբերական ինստիտուտը, որն ավարտել է 1956-ին:

1957-62թթ. աշխատել է Բաքվի գիտահետազոտական և նախագծային ինստիտուտի հիդրոմեխանիկայի լաբորատորիայում՝ որպես գիտաշխատող: 1962-1965թթ. սովորել է Ադրբեջանի արդյունաբերական ինստիտուտի ասպիրանտուրայում:

Իր ակտիվ կենսագործունեության ընթացքում աշխատել է նախկին Սովետական Միության տարբեր բուհերում՝ յուրաքանչյուր աշխատանք կատարելով բարձր պատասխանատվությամբ ու հավուր պատշաճի: Գերից մեկ է բազմաթիվ գիտական ու մեթոդական հոդվածների, ձեռնարկների:

ԱրՊՀ ճարտարագիտության ամբիոնը իր խորին վիշտն ու զորակցությունն է հայտնում Վանյա Ավանեսյանի ընտանիքին:

ԱրՊՀ ճարտարագիտության ամբիոն

ԳՐԻԳՈՐ ՂԱՎԻԹԻ
ՂԱՆԻԵՆՅԱՆ



Կյանքի 92-րդ տարում մեզանից հեռացավ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, հայտնի մանկավարժ և հոգեբան Գրիգոր Ղավիթի Ղանիեյանը:

Ծնվել է 1921թ., Մարտակերտի շրջանի Զափար գյուղում:

Միջնակարգ կրթությունն ստացել է Զափար գյուղում, այնուհետև ավարտել Շուշիի մանկավարժական տեխնիկումին կից 8-ամյա մանկավարժական կուրսերը և աշխատանքի անցել Վաղուհաս և Զափար գյուղերում՝ որպես դասվար: 1951թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1956թ. և աշխատանքի անցել ԳՀ լուսավորության նախարարության մանկավարժական բուհերի և ուսումնարանների բաժնում՝ որպես ավագ տեսուչ: 1960թ. աշխատանքի է անցել Երևանի մանկավարժական ինստիտուտում՝ որպես տեսուչ-մեթոդիստ և դասախոս:

1979թ. պաշտպանել է ատենախոսություն և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Այնուհետև տեղափոխվել է ԼՂԻՄ և աշխատանքի անցել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում (այնուհետև՝ ԱրՊՀ) նախ՝ որպես մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, ապա՝ «Արցախի համալսարան» թերթի խմբագիր, գիտքարտուղար, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

2011 թվականից թոշակառու է: Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ:

Գերից մեկ է տասնյակ գիտական և ուսումնամեթոդական հոդվածների:

Նա օգտվում էր ուսանողների և գործընկերների խորը հարգանքից և սիրուց:

Անվանի մանկավարժի և հոգեբանի, պայծառ մտավորականի հիշատակը երկար կապրի սպորողների հուշերում:

ԱրՊՀ մանկավարժության և
հոգեբանության ամբիոն

ՃՆՈՐՈՎԱԿՈՐԱՆՔ

ԻՆՁ ՀԱՄԱՐ ԾՈՎ Է ՄԻ ԿԱԹՒԼ ՅՈՂԸ



Տարիներ են եկել-անցել, բայց նրան ծնկել չեն կարողացել: Նա մնացել է նույն Նորայրը, լավատես ու կենսախիճ, ներող ու հանդուրժող, մեր բառն ու բանը, մեր գիրն ու գրականությունը...

Սկզբից մինչ վերջ պինդ ձգված, պրկված 80 երկար-երկար տարիներ, որ չեն ունեցել դատարկ անկյուններ, կորած, հետք չթողած, անհմաստ օրեր:

Ահա մի բնորոշ փաստ, որ ինքնին խոսում է նրա նվիրվածության, համառության, պարտաճանաչության, պատասխանատվության բարձր զգացումի մասին: Շուրջ հիսուն տարի (1958-2007) աշխատել է (հիշեցնեն, որ 1953-ին ավարտել է Ստեփանակերտի ուսուցչական ինստիտուտը, ապա՝ Հայկական պետական հեռակա մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը) հայրենի Հաղորդիում: Ասել է թե՛ մոտ կես դար քայլել է նույն նեղիկ ճանապարհով՝ առանց հոգնելու, առանց ուժը, եռանդը խնայելու: Ու այս ամենի շնորհիվ վայելել աշխատանքային ընկերների, ծնողների, աշակերտների հարգանքն ու վստահությունը: Երեխաների առջև բացահայտել մեր մայրենիի գեղեցկությունն ու հմայքը, սովորեցրել մաքուր հայերենով արտահայտել իրենց մտքերն ու զգացումները, նրանց հոգեհարազատ դարձրել մեր քնարերգության հրաշալի գանձերը. ահա ինչն է եղել ամենահարակրթիչը նրա համար:

«Մարդիկ ասում են, որ լավ մասնագետ եմ, և ես ցանկանում եմ հավատալ այդ հաճելի «ստին»,- կարդում ենք նրա յուրօրինակ ինքնակենսագրականում, որ գետեղված է «Հաղորդի»-ի ամենավերջին էջում:

Եվ ինձ այնպես է թվում, թե սովորական այս տողերից հանձնարարություն է ծորում, պարզություն ու շիտակություն:

Ո՞րն է լավ մարդ դառնալու չափանիշը, ի՞նչ է պետք դրա համար. այս հարցերն են շարունակ հուզել Նորայր Ավետիսյանին: Ահա ինչու նա միշտ ջանացել է զարգացնել սովորողների ճաշակն ու գեղագիտական զգացումները, նրանց մեջ դաստիարակել գաղափարական-քաղաքական վեհ հատկանիշներ, բնավորության ու վարքագծի հաստատուն գծեր:

Ու սա նրան հաջողվել է, քանզի նա խորապես գիտի մեր ազգային մշակույթը, մեր հին ու նոր գրականությունը, մշտապես հաղորդակից է լինում կյանքի նորություններին, այսօրվա դարոցի առջև ծառայած խնդիրներին:

- Կրթական համակարգի բարեփոխումների կենտրոնում,- ասում է նա,- պետք է տեսնել ուսուցչին: Ցանկացած փոփոխություն իրականացնելու համար անհրաժեշտ են խոր գիտելիքներ ու հմտություններ: Հետևաբար՝ կարևոր է ինչպես ուսուցչի մասնագիտական զարգացումը, այնպես էլ ծառայած խնդիրների լուծման առումով նորոշի մոտեցումների ու անհրաժեշտ պայմանների առկայությունը:

Այսպես է դատում վաստակաշատ մանկավարժը, որի հոգևոր աշխարհում ամեն օր մեր գրականության մեծերն են գրույցի նստում. եղիշե Չարենց, Համո Սահյան, Հովհաննես Թումանյան, Պարույր Սևակ, Ալեսի Բակունց, Հովհաննես Ծիրազ...

Ամենակարևորը՝ հայ պոեզիայի, մշակույթի, մեր ժողովրդի պատմության հանդեպ ունեցած իր հիացմունքը տասնամյակներ շարունակ նա փոխանցել է իր սաներին, երիտասարդ ուսուցիչներին, բոլորին:

Ժամանակի քուրայում թրծված այսպիսի խոսք կա. «Մարդ լինելու համար մանկավարժ լինելը պարտադիր չէ, բայց մանկավարժը պարտավոր է մարդ լինել»: Այս խորիմաստ բառերը տարիներ առաջ նա գրի է առել իր կազմած «Ասույթների հավաքածու» մատյանում ու սիրում է ամեն պատեհ առիթով հիշեցնել նոր-նոր կյանք մտած օրհանդիսներին՝ ավելացնելով. «Այո, ամենադժվար մասնագիտությունը մարդ լինելն է: Ես համոզված եմ սրանում»:

Հիրավի, մանկավարժ լինելուց զատ՝ նա մաքուր խղճի ու ազնիվ հոգու տեր անմեղավորություն է, որին խորթ են բժնանքն ու շողորթությունը, խարդավանքն ու խաբեությունը, սուտն ու կեղծիքը:

Եվ ամենևին էլ զարմանալի չէ, որ նրան վատահում ու

դիմում են ոչ միայն դարոցի հարյուրավոր շրջանավարտներն ու աշակերտները, այլև նրանց ծնողները, պարզապես մարդիկ, որ կարեկցող սրտի, մտածված խոսքի, բարեկամական վերաբերմունքի կարիք ունեն: Այսպիսին է եղել (և՛ է) 1933-ին հեռավոր այն գյուղի՝ Հաղորդիի հողից ու ջրից սերված նոր այրը (Նորայր), որի համար օրրանն իր ամենաչքնաղ վայրը, անկյունն է աշխարհում: Հասկանալի է, Փարիզից հետո: Կատակում եմ, որովհետև ինքը շատ է սիրում կատակը, սրամտությունը, ասելիքը հումորով համեմելը, ծաղկեցնելը, հաճելի դարձնելը, մի բան, որ, թերևս, պակաս կարևոր չէ մարդ անհատի ընդհանուր զարգացածության, կրթվածության, մեծության մասին անսխալ պատկերացում կազմելու համար:

Հումորով օժտված լինելն արժանիք է, որ հատուկ պիտի լինի դասարան մտնող ու երեխայի միտքը հղկող իսկական ուսուցչին:

Դե իսկ, իմ գրչակից ընկերը (մեր մտերմությունը շուրջ վեց անգամ տասը տարիների վաղեմություն ունի) ճիշտ որ իսկական ուսուցիչ է, որի համար մանկավարժությունը ավելին է եղել, քան զուտ մասնագիտությունը: Ասենք, որ նա երկար տարիներ տնօրեն է եղել, ու նրա ղեկավարության օրոք շրջանում, մարզում անցկացված երգ-երաժշտության փառատոներում, առարկայական օլիմպիադաներում, սպորտային մրցումներում սովորողներն իրենց վատ չեն դրսևորել, մի բան, որ կոլեկտիվի միասնական ջանքերի արգասիք կարելի է համարել: Բաց դասերի, քննարկումների, հետաքրքիր միջոցառումների, համդիպումների մասին չեմ խոսում: Ու սա քիչ բան չի ասում նրա կազմակերպչական ցիլի, պահանջկոտության ու հոգատարության մասին: Այո, հանձնարարված գործին նա երբեք մատների արանքով չի մայել: Բնավորություն է, որ գալիս է մանկուց:

- Մանկավարժն ու բժիշկը սխալվելու իրավունք չունեն, քանզի երկուսն էլ գործ ունեն կենդանի մարդու հետ: Ես իմ ողջ կյանքում առաջնորդվել եմ այս սկզբունքով,- ակնարկում է նա:

Ու մարդ դժվարանում է կողմնորոշվել՝ նրա համար բնական խառնվածքն է առաջնային եղել, թե՛ մանկավարժի ոգու սխրանքն ու արիությունը: Երկի երկուսն էլ:

Համեմայն դեպ, նա բացել է լուսավոր մի ուղի, որով այժմ ընթանում են շատ-շատերը՝ որպես իր արժանի հետնորդներ, կրթական ոլորտի նվիրյալներ: Ուշագրավ մի երևույթ է: Ժամանակին նա կարողացել է ունենալ համոզել, որ դասագրքով բավարարվել չի կարելի, որ պետք է օգտվել լրացուցիչ աղբյուրներից՝ աշակերտների միտքը, ուղեղը շարժելու, դասը հետաքրքիր ու արդյունավետ դարձնելու համար:

Եթե այս ամենին գումար ենք այն, որ մանկավարժական գործունեությանը զուգահեռ նա զբաղվել ու զբաղվում է գրական-ստեղծագործական աշխատանքով, ամեն ինչ պարզ ու հստակ կլինի: Նա հինգ գրքերի՝ «Սիրտս անհանգիստ է», «Իմ Պղնդ-Պուղին», «Պղնդ-Պուղու նորոյս արկածները», «Քալլաղ գողված գինվորի ու մոր մասին», «Հաղորդի» (վեցերորդ տպարանում է), մասնուլուն տպագրված հարյուրավոր ուշագրավ հոդվածների հեղինակ է: Այսօր էլ նա գիրքը, գրիչը ձեռքից ցած չի դնում: «Մարդ որ օրական գոնե 50-60 էջ չկարդա, մեր լեզվի համը, քաղցրությունը կհիմանա», - ասում է:

Այս օրերին նա հաճախակի է մայրու-քրքրում տարիների իր դեղնած-խունացած թղթերը, սևագրերը, արածը «կշռում»: Իսկ արածը քիչ չէ: Ավելին՝ արժե տեսնել ու գնահատել:

- Մի մաքուր, մի բարի անուն թողնեն սերունդներին ու գնամ,- սա է իմ երազանքը: Ինձ պետք չէ ոչ փառք, ոչ կայք, ոչ կարողություն: Այնպես որ, ես գոհ եմ իմ անցած ուղուց, իմ տպագիր տողերի նկատմամբ ընթերցողի մոտեցումից: Միանգամայն բնական այս զգացողությունը, թվում է, խտացված է Հ. Սահյանի «Շնորհակալ եմ» բանաստեղծության տողերում.

Չեմ ուզում փառքի փոթորկուն ծովեր, Ինձ համար ծով է մի կաթիլ ցողը:

Արտասանում է նա՝ ասես վեհացած ու վերացած...

Այս գեղեցիկ տողերով էլ ավարտենք մեր ասելիքը 80-ը բողրած շնորհաշատ մանկավարժի, գրողի մասին: Ի սրտե շնորհավորենք մեր մարդկանք, որ Տիրոջ կամքով նա դեռ շատ տարիներ «ուրջը կախ գցի» ու ստեղծագործի՝ չնոռանալով, որ առջևում իրեն սպասում են ուրիշ տոներ, ամյակներ... Համոզված եմ, որ այս փառահեղ ամյակները տանող զառիվեր ճանապարհը եղբայրն իմ կանցնի առանց դադարի, առանց որևէ կանգառի:

ՄԻՇՏ ԵՐԻՏԱՍԱՐԳ ՄԵՐ ԳՈՐԾԵՆԿԵՐԸ



Կան մարդիկ, ովքեր իրենք են տնօրինում իրենց ծակատագիրը, վարքը, եռանդը, աշխատասիրությունը, իրենք են լուծում իրենց երիտասարդ մնալու հարցերը:

Այդպիսիներն ապրում են բնության հետ ընկերացած, վերցնում բնությունից և տարբեր ձևերով՝ գրականության, երաժշտության, կերպարվեստի միջոցով վերադարձնում են նրան, վերցնում և առատորեն շաղ են տալիս շրջապատում՝ իրենց շուրջը ստեղծելով բարիք, լույս և ջերմություն, բարոյական արժեքներ ու գեղեցկություն, ձևավորում մարդկային առողջ փոխհարաբերություններ:

Այլ կերպ՝ ամեն մարդ ինքն է ստեղծում իր կենսագրությունը: Գյուլչորա Արզումանյանը ստեղծել է իրեն արժանի և ուշագրավ կենսագրություն: Ծնվել է մանկավարժությանը նվիրվելու առաքելությունով:

Աշխատանքային կենսագրությունը սկսել է 1972թ.՝ աշխատանքի անցնելով հարազատ գյուղի դպրոցում որպես ավագ ջոկատավար, հետո՝ մաթեմատիկայի ուսուցչուհի, փոխտնօրեն: Հետո կոմերիտական աշխատանք՝ Ստեփանակերտի քաղկոմում:

Մանկավարժությունը Գ. Արզումանյանի կոչումն է, ուստի նա նորից դպրոցում էր, աշակերտների հետ: 1979-1991թթ. Այգեստանի միջնակարգ դպրոցի փոխտնօրենն էր, իսկ 1991-ից առայսօր՝ Խնածախի միջնակարգ դպրոցի տնօրենը:

Թե այդ տարիներին ինչքան գեղեցիկ միջոցառումներ ու ծրագրեր են իրականացվել երկու կրթօջախներում, ապավինենք բոլոր շրջանավարտների հիշողությանը. միայն նրանք կարող են ամենաճշգրիտ մանրամասնությամբ ներկայացնել Գ. Արզումանյան մանկավարժին, նվիրյալին, հայրենասերին:

Ինչպիսի հարցեր առաջադրեր վաստակաշատ մանկավարժը, թիվ մեկ պահանջը գտնում և դնում էր հայեցի դաստիարակության մեջ՝ սովորողներին տալով ազգային ուսուցում և դաստիարակություն:

Ընկեր Արզումանյանը, մեծ նշանակություն տալով սովորողների արժեքային համակարգի ձևավորմանը, գտնում է, որ նրանց մեջ անհրաժեշտ է զարգացնել հարցասիրություն ու հետաքրքրություն, ինքնուրույնություն, գիտունակություն: Նա գտնում է, որ մտավոր դաստիարակության առանցքը պետք է լինի ձևավորված գիտական աշխարհայացքը:

Գ. Արզումանյանը ապրում է «գեղեցիկի օրենքներով»՝ առաջնորդվելով ամեն ինչում գեղագիտական զգացումներ, արվեստի տարբեր բնագավառների նկատմամբ հետաքրքրություններ և նախասիրություններ, գեղեցիկի պահանջները դաստիարակելու սկզբունքներով:

Նա մանկավարժական նորարարության, համագործակցային մանկավարժության լավագույն իրականացմանը է:

Խնածախի միջնակարգ դպրոցը տնօրենի անմիջական նախաձեռնությամբ լավագույն մանկավարժական ձեռքբերումների, ավանդույթների կրողն ու պահպանողն է:

Գ. Արզումանյանի նշանաբանն է՝ ի հայտ բերել որոշակի կարողություններով օժտված, ներդաշնակորեն զարգացած երեխաների և ստանձնել նրանց անհատականության ձևավորման գործը: Նա դեմ է վարչական կոշտ մեթոդներով սովորողների հետ տարվող ցանկացած աշխատանքի:

Ըստ նրա՝ մանկավարժը պետք է լրիվությամբ իմանա սաների տարիքային, հոգեբանական, անհատական առանձնահատկությունները, հոգեկան ապրումները: Հստակ պատկերացնելով, որ կյանքի հետ դպրոցի ոչ ամուր կապի ժամանակակից պայմաններում աշակերտների հանրօգուտ գործունեությունը սահմանափակելու պայմաններում նկատվում է դպրոցականի սոցիալական ակտիվության և ինքնագործունեության սառնում, Գ. Արզումանյանն իր պրակտիկայում դրա լուծման ուղիները ևս գտել է: Համայնքի հրատապ հարցերը նա համարում է նաև դպրոցի հարց: Ցանկացած հարցում օժանդակում է, խորհրդակցում և խորհուրդ տալիս: Արդի պայմաններում արտադարոցական և արտադասարանական դաստիարակությունը համարելով սովորողների բազմակողմանի զարգացման կարևորագույն միջոցներից մեկը՝ նա միշտ որոնումների մեջ է համայնք-դպրոց-բնություն-հասարակություն քառուղիներում գտնելու սովորողների օպտիմալ հանգիստն ու հագեցած առօրյան: Համայնքի տարածքի աղբյուրների մաքրությունը, հուշարձանների խնամքն այն ամենամյա աշխատանքներն են, որոնք աշակերտները կատարում են ամենամյա պատրաստականությամբ:

Դպրոցում բարձր հիմքերի վրա է գիտակցական կարգապահությունը, որը տնօրենի և մանկավարժական կոլեկտիվի տարիների բեղմնավոր աշխատանքի արդյունք է:

Այդպիսին է Գյուլչորա Արզումանյանը. սկսած գործը եռանդով կատարելու, պատասխանատու և պատրաստակա սովորողությունը դարձել է բնավորություն: Նրա աշխատասիրությունը, համառությունն ու աներեք կամքը հաղթահարել են բոլոր խոչընդոտները՝ օրինաչափ դարձրել հաղթանակներն ու հաղթանակի բերկրանքը:

Շնորհավորենք մեր գործընկերոջը՝ ծննդյան 60-ամյակի առթիվ և ակնկալենք, որ իր երիտասարդ հոգով նա կշարունակի շնայլորեն բարիք, լույս, ջերմություն, գեղեցկություն սփռել շրջապատում:

Այժմ մարդիկ նվաճում են ոչ թե ֆիզիկապես՝ գերեվարվելով, այլ հոգեպես, տեսանելիորեն մնալով ազատ ու անկախ: Գյուլչորա Արզումանյանը մեզ գրավում է հոգեպես:

Միջալի ԲԱՆՍԱՆ
20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ

Սվեդլանա ԱՍՐՅԱՆ
Ասկերանի շրջվարչակազմի կրթության բաժնի գլխավոր մասնագետ

